

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԱՀԻՏ ԳՈՒՐԳԵՆԻ**

**ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ  
(«ԱՆՅՈՐԴԸ ԵՎ ԻՐ ՃԱՄՓԱՆ», «ԲԱՆԿՈՈՊԸ ԵՎ ՄԱՄՈՒԹԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ»,  
«ՆԱՎԸ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊԵՐԸ)**

**Ժ.01.02 - «Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ – 2018**

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան  
գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ ՍՈՒՐԵՆ ՍԵՐՅՈՒՄՅԱՆ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր ԿԻՄ ԲԱԳՐԱՏԻ ԱՂԱԲԵԿՅԱՆ

բանասիրական գիտությունների թեկնածու,  
դոցենտ ԼԻԼԻԹ ԲՈՐԻՍԻ ՍԵՅՐԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի Խաչատուր Աբովյանի անվան  
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թ. մարտի 30-ին՝ ժամը 13:30-ին, ՀՀ ԳԱԱ Մ.  
Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Գրականագիտության  
003 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտի  
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. փետրվարի 28-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
բանասիրական  
գիտությունների թեկնածու, դոցենտ՝  
Մարգարյան

Ս. Ա.

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքը նվիրված է 20-րդ դարի հայ գրող Կոստան Զարյանի գեղարվեստական արձակի սովորաձևավալ մի հատվածի՝ «Անցորդը և իր ճամփան» (Երևան, 2010), «Բանկոռալը և մամուլի ոսկորները» (Անթիլիաս, 1987)<sup>1</sup>, «Նավը լեռան վրա» (Բոստոն, 1943, Երևան, 1963) վեպերի քննությանը:

Ատենախոսության մեջ փորձ է արվում մեկնաբանել գրողի աշխարհայացքը, որը ձևավորվել է Եվրոպայում՝ ժամանակի գրական և փիլիսոփայական ուղղությունների ազդեցությամբ, սակայն կարևոր այլ հանգամանքներ նույնպես նպաստել են նրա կայացմանը: Հայրենիքից հեռու ապրելը և նրա սերն ու կարոտը արյան մեջ կրելը, Մխիթարյանների միջավայրում ապրելն ու սովորելը, Պոլիսում գրական ակնառու դեմքերի հետ շփվելը, գրչակից համախոհներին և հակառակորդներին եղեռնի ժամանակ կորցնելը, ժողովրդի ողբերգությունը տեսնելը, այդ ողբերգության անանցանելի ցավը կրելը շաղախվում են արդեն կայացած աշխարհայացքի հետ և ձևավորում հետաքրքիր հայեցակարգ, որն էլ պիտի ծներ այն յուրօրինակ համակարգը, որի դրսևորումը տեսնում ենք նրա վեպերում:

Ատենախոսությունն անդրադարձել է Զարյանի վեպերի ժանրային առանձնահատկություններին, քննվել են գրողի կերպարակերտման արվեստը, գեղագիտական աշխարհընկալումը: Կարևորվել է գրողի վերաբերմունքը հայրենիքին և ժողովրդին, նրա մշակույթին: Անդրադարձ է կատարվել, այն թեմաներին, որոնց մասին գրում է Զարյանը նշված վեպերում՝ խորապես քննելով անհատի և հասարակության, պետության և ժողովրդի, տիրող կուսակցության գաղափարախոսության և արվեստի հարաբերության, հայ ոգու և ապագայի հայ մարդու խնդիրները:

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կոստան Զարյանի ստեղծագործությունները տպագրվել են հիմնականում սփյուռքում և միայն անցյալ դարի վերջին տասնամյակից սկսած՝ լույս են տեսնում հայրենիքում:

Զարյանի գեղարվեստական արձակին անդրադարձը արդիական է, քանի որ

1. չկա ստեղծագործությունների լիարժեք և համակարգված ուսումնասիրություն,

2. նրա ստեղծագործություններում շոշափվում են հարցեր, որոնք նույնքան կարևոր ու հրատապ են, որքան այդ վեպերի ստեղծման ժամանակ.

ա. պատմությունն ավարտել է հերթական շրջափուլը և մեզ կրկին կանգնեցրել ընտրության առաջ՝ հասկանալ սեփական լինելության խորհուրդը, կարողանալ արտածել մեր պատմության փիլիսոփայությունը, ձևավորել

<sup>1</sup> Մինչև առանձին գրքերով լույս տեսնելը հրատարակվել են «Հայրենիք» ամսագրում համապատասխանաբար 1927 և 1931-1934 թվականներին:

ժամանակաշրջանին համապատասխան գաղափարաբանություն և ընտրել առաջընթացի սեփական ճանապարհը:

բ. Քննվող ստեղծագործություններում գեղարվեստական պատումը հյուսվել է պատմական այնպիսի իրադարձությունների հիմքի վրա, որոնք խորհրդային իրականությունը թաքցրել է կամ աղավաղել, ուրեմն ժամանակակից ընթերցողի համար ունեն ճանաչողական նշանակություն:

Աշխատանքը կարող է օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների, ինչպես նաև Կ.Ջարյանի ստեղծագործությամբ հետաքրքրվողների համար:

## **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ**

Ուսումնասիրության առարկան Կոստան Ջարյանի երեք վեպերն են՝ «Անցորդը և իր ճամփան», «Բանկոպը և մամուֆի ոսկորները», «Նավը լեռան վրա» (բոստոնյան և երևանյան հրատարակությունները)

Ջարյանի աշխարհայացքը՝ իբրև ամբողջական համակարգ, արտահայտված է այս երեք վեպերում, այդ պատճառով նպատակահարմար ենք գտել հենց այս վեպերի ուսումնասիրությունը դարձնել առանձին նյութ:

Աշխատանքում մանրամասն դիտարկվում են

- Ջարյանի աշխարհայացքը,
- գեղագիտական իդեալը,
- ստեղծագործությունների ժանրային առանձնահատկությունները,
- կերպավորման յուրահատկությունները Ջարյանի ստեղծագործություններում,
- «Նավը լեռան վրա» վեպի երկու հրատարակությունների համեմատական քննությունը՝ հեղինակային տարբերակը պարզելու, ինչպես նաև ցույց տալու համար, որ ազգային ճակատագիրը իր ուղղակի ազդեցությունն է ունեցել և՛ գրողի, և՛ նրա ստեղծագործությունների ճակատագրի վրա,
- քննվող վեպերի լեզուն և ոճը.
- Կ. Ջարյանի ստեղծագործությունների արդիականությունը:

Ատենախոսության նպատակն է համալիր կերպով ուսումնասիրել նշված ստեղծագործությունները, արժևորել և գնահատել դրանք:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Կոստան Ջարյանի ստեղծագործությունների ծավալուն ուսումնասիրություն կատարել են Ա. Ավագյանը՝ «Կոստան Ջարյան. Կյանքը և գործը» (Երևան, 1998), Վ. Մատթեոսյանը՝ «Կոստան Ջարյանի շուրջ» (Անթիլիաս, 1998), Պ. Սնապյանը՝ «Ավագախրած նալը» (1964, Բեյրութ), Երվանդ Տեր-Խաչատրյանը, ով տպագրության է պատրաստել գրողի ստեղծագործությունները՝ գրելով տվյալ գրքի համար առաջաբան կամ վերջաբան, ծանոթագրություններ:

Գրողի ստեղծագործության վերաբերյալ ուսումնասիրություններ կարելի է գտնել հիմնականում մամուլում: Դրանք անդրադառնում են գրողի ստեղծագործության այս կամ այն հարցին և դրվագային բնույթ են կրում:

Ատենախոսության մեջ առաջին անգամ հանգամանորեն ուսումնասիրվում և մեկնաբանվում են Կոստան Զարյանի գեղարվեստական արձակի թեմատիկ և լեզվաոճական յուրահատկությունները, գաղափարական բովանդակությունը, կերպարակերտման արվեստը, ժանրային առանձնահատկությունները, վեպերի կառուցվածքը:

## **ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

Ատենախոսությունում առաջադրված խնդիրների մեկնաբանության համար կիրառվել են բանասիրական, համեմատական մեթոդները, գրական երկերի համադրական և համակարգային վերլուծության սկզբունքները:

## **ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ատենախոսության հիմնադրույթներն արտացոլված են Հայաստանի Հանրապետությունում տպագրվող գիտական հանդեսներում և ժողովածուներում: Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Սփյուռքահայ գրականության բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և գրականության ցանկից:

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ ներկայացված է ատենախոսության ուսումնասիրության առարկան, հիմնավորված է թեմայի արդիականությունը, շարադրված են աշխատանքի մեթոդաբանությունը, նպատակն ու խնդիրները:

## **ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

### **ԶԱՐՅԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ**

#### **1.1. Գեղագիտական աշխարհընկալումը**

Այս ենթագլխում ներկայացվում է քսաներորդ դարասկզբի հայ գրականության վիճակը: Պարզաբանվում է գրողի փիլիսոփայական-գեղագիտական աշխարհընկալումը:

Կոստան Զարյանն իր ստեղծագործական կյանքի ընթացքում հավատարիմ մնաց «Հանգանակի» դրույթներին: Իր ստեղծագործություններում նա փնտրում ու ընթերցողին է ներկայացնում Հայ Հոգին, որը «... իմացական տիեզերքին մեջ տարր մըն է որուն հայտնությունը պիտի զարմացնե խորհող մարդկությանը»:<sup>2</sup> Նա

<sup>2</sup> Զարյան Կ., Նավատոմար, Երևան, 1999, էջ 74:

քննում է հայի էթնիկ յուրահատկությունը՝ ներկայացնելով երկրի տարածքային-աշխարհագրական յուրօրինակությունը, վերլուծում է նաև մշակութաբանական հարցեր՝ դրանցում կարևորելով բնապատմական ինքնության դրսևորումները:

Զարյանը խոսում է գաղափարաբանության մասին, որը ձևավորվում է՝ ներառելով ժողովրդի կերտած պատմությունը, մշակույթը, վերաբերմունքը կրոնին: Մշակույթի մեջ հեղինակը մանավանդ կարևորում է գրականությունը, քանի որ այն, լինելով խոսքի արվեստ, շատերին է հասանելի:

Զարյանը կարծում է, որ իրական գրականությունը որևէ կուսակցության գաղափարախոսությամբ չի ստեղծվում: Նա այն կարծիքին է, որ հայ բանաստեղծը մենակ մնալու և մենակ լինելու կարիք ունի: Մենակություն ասելով՝ նա նկատի չունի առարկայական պայմանները, այլ այն հոգևոր խոր իրողությունը, որը գրողին վեր կբարձրացնի նյութական աշխարհից ու կկապի տիեզերականի հետ: Մենակությունը՝ օտար գաղափարներից և ազդեցություններից ազատ լինելը, հնարավորություն կտա, որ հայ բանաստեղծը վերադառնա հայ իրականություն:

Գնահատելով մեր ժողովրդի մշակույթն ու գրականությունը՝ գրողը երբեմն չափազանցության մեջ է ընկնում: Իհարկե, քաղաքակրթության արդի պայմաններում անհնար է արգելել մշակույթի և գրականության մեջ ներթափանցումներն ու փոխթափանցումները, հնարավոր չէ և չի կարելի սահմանափակվել, ներփակվել ու առանձնանալ: Ինքը՝ Զարյանը՝ որպես գրող ու փիլիսոփա, եվրոպական քաղաքակրթության ծնունդ էր: Զարյանի եզրահանգումները արդյունք են իր ժողովրդի մշակույթի նկատմամբ մեծ սիրո և բարձրագույն գնահատականի և միաժամանակ մտահոգության, որ օտար գաղափարախոսության ազդեցությամբ մեր դարավոր մշակույթը կարող է աղավաղվել, փոխվել, այլակերպվել: Նույն այդ մտահոգությունն է Զարյանին ստիպում մտածել հայ գրողի և նրա ստեղծած գրականության ապագայի մասին. նա չի կարողանում ընդունել գրական մեթոդներից կառչած մնալը, որոնք նույնպես գրողին կաշկանդում են: Իսկական գրողը նա է, ըստ Զարյանի, ում սրտի հետ տրոփում է կյանքը և շունչ ու թափ հաղորդում ստեղծագործությանը:

Հեղինակը հայ մտավոր կյանքին սպառնացող վտանգ է տեսնում և ահազանգում: Այդ վտանգը գալիս է նրանից, որ մեր ազգը այլափոխում է իր դեմքը: Յուրաքանչյուր ժողովուրդ ստեղծում է իր մշակույթը՝ նրանում արտահայտելով իր ոգին ու ինքնությունը, իր բարոյականությունը, երազանքը և սերը երկրի նկատմամբ, մինչդեռ բոլշևիկյան գաղափարախոսությունը, խորթ լինելով հայ ժողովրդի աշխարհընկալմանն ու աշխարհագրությանը, թույլ չի տալիս, որ նա իր դիցավեպը ավարտին հասցնի: Գրողը չի ցանկանում, որ մենք մտավոր մուրացիկի վերածվենք, ինչը, ըստ նրա, պարտադրում է նոր գաղափարախոսությունը՝ հայ մարդուն զրկելով սեփական երազից և մտքից: Նա դեմ է ոչ միայն ընդօրինակելուն, այլ նաև պարտադրանքին:

Բանաստեղծությունը ազատ մտքի ծնունդ է, և կուսակցության հրամանով բանաստեղծներ չեն դառնում, գրականություն որևէ կուսակցության թելադրանքով չի կարող ծնվել: Գրողը ցավով է արձանագրում, որ 1920-ականների Հայաստանում գրվում են միայն պարզունակ ու կանխատեսելի ստեղծագործություններ. գաղափարական պարտադրանքը բերում է գրականության մահացման: Զարյանը կարևորում է նաև բանաստեղծության ձևը, որը պիտի բխի հոգուց, մտածելու և

զգալու կերպից: Իհարկե, ստեղծագործության արտահայտման ձևի վրա ազդում է նաև դարի ռիթմը: Բանաստեղծությունը, ինչպես յուրաքանչյուր արվեստ, գոյանում է, երբ միավորվում են հոգին, բովանդակությունը և ձևը, այդ պատճառով էլ այն ծնվում է, երբ հոգին ազատ է, զերծ պարտադրանքներից, երբ ստեղծագործողը ասելիք ունի և այդ ասելիքը զգացել ու ապրել է, երբ ստեղծագործելիս դարձել է իր դարի շունչը և գտել ասելիքի ձևն ու ռիթմը:

## **1.2. Գաղափարագեղագիտական իդեալը.**

### ***Արարարյան մարդ՝ իդեալ և փրկության հույս***

Այս ենթագլխում խոսվում է ազգային մենակության խնդրի մասին՝ ներկայացնելով Հայաստանի 1918-1920 թվականների քաղաքական վիճակը: Մեր երկիրը հայտնվել էր Թուրքիայի և Ռուսաստանի շահերի բախման կիզակետում: Փոխվել էին անփոփոխ թվացող հարաբերությունները երկրների միջև: Երկարատև պատերազմը, նրան հաջորդող հեղափոխությունը տակնուվրա էին արել տարածաշրջանը: Սովն ու դաժանությունները փոխել էին մարդկանց, հանել կյանքի բնականոն հունից: Փոխվել էին մարդկային փոխհարաբերությունները. պատերազմի բերած աղետների պատճառով հավասարակշռված կյանքը դուրս էր եկել հունից և մարդուն դարձրել վախեցած ու մոլորված մեկը, որից ամեն ինչ սպասելի է: Փորձությունների ժամանակ, ինչպիսին է պատերազմը, երկրորդական են դառնում բարոյական շատ արժեքներ, և բարոյականը, գեղեցիկն ու ճիշտը չեն կարողանում պայքարել չարության ու նախանձի դեմ:

Զարյանը ներկայացնում է երկրների և մարդկանց հարաբերություններում առաջացած քաոսը և այդ պատկերի վրա հյուսում իր ասելիքը. տեսնել ու ընթերցողին ցույց տալ հայի էությունը և ոգին, գտնել, թե որն է հային պահող ուժը, ինչպես է հայ տեսակը կարողացել հաղթահարել նմանատիպ փորձությունները և անցնել ժամանակների փոթորիկների միջով ու հասնել մեր օրերը: Զարյանն ուսումնասիրում է հայ տեսակը ոչ միայն պատերազմի ժամանակ, այլև՝ խորհրդայնացման տարիներին, երբ զենքերը լռել էին, բայց պատերազմը շարունակվում էր գաղափարական դաշտում, և հայի համար կենսական խնդիր էր իր տեսակը պահելու համար դաժանագին պայքարը:

Ազգային մտախառնվածքը, ըստ գրողի, գոյանում է այն մնայուն արժեքներից, որոնք անհատները պահում են իրենց մեջ, ինչպես ճրագ: Այդ արժեքները ձևավորվում են դարերի ընթացքում՝ ցեղի ապրումներից, մտածումներից, երկրի ու մարդու նկատմամբ ունեցած վերաբերմունքից: Մարդը իր մեջ կրում է այդ արժեքները՝ մնալով իր ցեղի մասնիկ: Զարյանն իր վեպերում խոսում է ազգի հոգևոր-մշակութաբանական ոլորտում գաղափարաբանության ձևավորման և դրսևորման մասին: Այսպես, անձի և ցեղի մեջ պարունակվող այդ ճրագը, որին Զարյանը «միթոս» է անվանում, նրա կարծիքով կյանքի հիմքն է: Ըստ Զարյանի, երբ մարդը ճանապարհ է գտնում դեպի այդ լույս-արժեքները, հենց այդ ժամանակ է սկսվում երկխոսությունը երկրի ու երկնքի հետ, և կայանում է երկինք-երկիր-մարդ միությունը: Մեր ժողովրդի ոգու և էության այդ ամբողջականության ծնունդն է մշակույթը՝ դիցավեպից սկսած մինչև ճարտարապետություն: Զարյանը քննում-կարևորում է նաև պատմատարածքային ոլորտը, որը ազգային գաղափարաբանության ձևավորման կարևորագույն պայմաններից է:

Պատմական ու քաղաքական ցնցումների պատճառով ընդհատվել է երկիր-ազգ-ոգի միասնությունը, և մշակույթի արարման ընթացքը մնացել է բնագրական մակարդակի վրա: Ընդհատվել է նաև ազգի և անհատի կապը: Այս պայմաններում անհատը դադարում է հոգևոր մշակութաբանական ոլորտում ազգային գաղափարաբանության ստեղծմանը մասնակցելուց. քայքայվում է Հայ ոգու ինքնությունը: Որպեսզի ժողովուրդը կրկին գտնի ճանապարհը դեպի իր էության ներսը, այսինքն՝ վերհիշի իր գոյաբանության կարևորագույն պայմանը, անհրաժեշտ է, որ նա մնա ինքն իր հետ և ունենա առաջնորդներ, որոնք կմատնանշեն ճանապարհը և ճանապարհն անցնելու կերպը: Մեծ ցավ ապրելով ժողովրդի վիճակի համար՝ գրողը քննում-ուսումնասիրում է նրա մտախառնվածքն ու հոգեկերտվածքը և հասկանում, որ մեր ժողովուրդը, այնուամենայնիվ, ունի հնարավորություն պատմության (կամ ճակատագրի) նախապատրաստած այս ցնցումն էլ վերապրելու: Բայց դրա համար անհրաժեշտ է, որ ժողովուրդը ծնի ազատ մարդու սերունդ, որին գրողն անվանում է Արարատյան:

Ֆրիդրիխ Նիցշեի «Այսպես խոսեց Զրադաշտը» ստեղծագործությունից ոգևորված՝ Կոստան Զարյանն իր ստեղծագործություններում կերտել է հերոսամարդու իր իդեալը՝ ցանկանալով կամ երազելով նրա ծնունդը: Գրողը Հիսուսին ընկալում է որպես մեծ պայքարողի ու ստեղծագործողի, հսկայի, դյուցազնի, ով տարավ ամենամեծ ու ամենադժվարին պայքարը. հաղթեց ինքն իրեն, նրա մեջ նստած հոգևորը կարողացավ հաղթել նյութականին: Հիսուսը կարողացավ ներքին փոխակերպություն ապրել:

Սակայն իր հերոսամարդուն կերտելիս Զարյանը չի բավարարվում միայն Քրիստոսի կերպարով: Արան՝ մեռնող ու հարություն առնող հեթանոս աստվածը, նույնպես մեծագույն փոխակերպվող է: Նա իր մեջ կրում է հեթանոս աստվածների արևային բնույթը: Կ. Զարյանը կարծում է, որ Քրիստոսի և Արայի ներդաշնակ ամբողջությունն է գերմարդ հասկացության հիմքում ընկած: Արան առնականության, տիեզերածնության և արևային ուժի խորհրդանիշն է՝ ուժ և կամք: Քրիստոսը միտք է, ոգի և գաղափար:

Կ. Զարյանի համար Հայաստանը պատահական վայր չէ, ուր պիտի ծնվի Արարատյան մարդը (հերոսամարդը): Գրողը կարևորում է երկրի և ժողովրդի միասնությունը: Հայաստանը յուրօրինակ երկիր է, նրա յուրօրինակությունը ոչ միայն բնությունն է կերտել, այլև մարդիկ: Այդ յուրօրինակությունը դրսևորվում է մանավանդ մշակույթի մեջ:

Ներկայացնելով գերմարդու իր ընկալումը և նրան անվանելով Արարատյան մարդ, ապացուցելով, որ մեր երկիրն ու ժողովուրդը ի վիճակի են ծնելու գերմարդուն՝ Կոստան Զարյանն ուսումնասիրում է հայ ոգին: Նա ցանկանում է ապացուցել, որ հայ մարդը իր մեջ կրում է այն աստվածայինը, որը պետք է ծնունդ տա Արարատյան մարդուն:

«Նավը լեռան վրա» վեպի նախաբանում Զարյանը գրում է, որ գիրքը մի քանի հայ հոգիների պատմությունն է: Նրանցից Միշա Թումանյանը, Բաբկեն Միրանյանը Արարատյան մարդու գալստյան ապացույցն են, իսկ Արա Հերյանը նրա նախատիպն է:

Հերյանը կարողացավ անցնել Զրադաշտի ճառած երեք կերպափոխությունները: Արհամարհելով կյանքի ընթացքում կուտակած



իմաստնությունը՝ հասավ ոգու ճանաչողության՝ դրա համար ընտրելով դժվարագույն ճանապարհ՝ միայնանալը՝ բոլորից և ամեն ինչից հրաժարվելը:

Երկրորդ կերպափոխությունը նույնքան դժվար էր. նա կարողացավ «ոչ» ասել «դու պարտավոր ես»-ին և ընդունել «ես ուզում եմ»-ը: Մարդը՝ որպես հասարակության անդամ, իր վրա է վերցնում պարտավորությունների ծանր բեռ՝ դա համարելով անհրաժեշտություն, և մոռանում է ներքին ազատության, սեփական կամքի դրսևորման մասին: Ընդունվածն ու պարտադրվածը հաղթահարելը նման է ամենամեծ ու ամենաճանր ճակատամարտում տարած հաղթանակի, որի արդյունքը ներքին ազատության ձեռքբերումն է և անհատականություն դառնալը: Արա Հերյանը կարողացավ հաղթանակով դուրս գալ այդ ճակատամարտից:

Երրորդ կերպափոխությունը մանուկ դառնալն է: Երբ Հերյանը մոռացավ հին արժեքները, միտքն ու հոգին մաքրվեցին հասարակության պարտադրածից: Նա այլևս նույնքան մաքուր ու անմեղ էր, որքան նոր աշխարհ եկած մանուկը: Նա պատրաստ էր նոր սկզբի:

Ճիշտ է, Հերյանի օրինակով Կոստան Զարյանը ցույց է տալիս, որ հնարավոր է գերմարդու ծնունդը, բայց գերմարդը կծնվի միայն այն դեպքում, երբ ժողովուրդը պատրաստ կլինի նրան ծնել: Գրողը ցավով է խոսում այն մասին, որ մեր ժողովուրդը բազմաթիվ անգամներ է անցել Քրիստոսի Գողգոթայի ճանապարհով, նրա պես տառապել է, բայց այդ տառապանքը հոգեպես չի վերապրել, որ կարողանա հաղթահարել իրեն այնպես, ինչպես Քրիստոսը կարողացավ սովորականը, թերին, կասկածելին հաղթել իր մեջ ու հերոսանալ: Երբ որ մենք կարողանանք մեր հոգում նստած ստրկությունը և ծուլությունը հաղթահարել, որի համար ներքին տառապանք ու պայքար է պետք, կհերոսանանք, կփոխակերպվենք, ինչպես Հիսուսը: Այդ ժամանակ կծնվի նոր՝ Արարատյան մարդը:

### ***1.3.Բոլշևիկյան գաղափարախոսությունն ու քաղաքականությունը եվ հայ կյանքն ու միտքը***

Կոստան Զարյանն իր գեղարվեստական արձակի մաս կազմող երեք վեպերում՝ «Անցորդը և իր ճամփան», «Բանկոռպը և մամուփի ոսկորները», «Նավը լեռան վրա», ոչ միայն նկարագրում է 20-րդ դարի քսանականների Հայաստանը, այլև վերլուծում է բոլշևիկյան գաղափարախոսությունը՝ նպատակ ունենալով հասկանալ, թե որքանով է այն համապատասխանում մեր ժողովրդի էությանը և կարո՞ղ է արդյոք ապահովել այնպիսի առաջընթաց, որին արժանի է մեր ժողովուրդը: Հայաստանը կորցրել էր ինքնուրույնությունն ու ինքնությունը և դատապարտվել գաղափարական սնանկության, քաղաքական ճորտությունից բխող ցավալի ու ծիծաղելի վիճակի:

Յուրաքանչյուր գաղափարախոսություն հնարավոր է ծառայեցնել երկրի և ժողովրդի շահերին, եթե կա քաջություն, հնարամտություն և կամք: Բայց գրողը չի տեսնում այն անհատներին, որոնք ցանկություն ունեն և կարող են դա անել: Արդյունքում ծնվել է քաղաքականապես, գաղափարապես և բարոյապես ամուլ վերնախավ և վախի ու անորոշության մեջ ապրող հասարակություն: Այնուամենայնիվ, Զարյանը հավատում է հայի ուժին, որը դարերի ընթացքում մեզ բազմիցս դուրս է բերել մղձավանջից և դեպի ապագա ուղի ցույց տվել: Իր

վեպերում գրողը ցույց է տալիս, թե որն է հայի ուժը: Գրողը կարծում է, որ ժողովրդի «ցեղային հիմնազօծերը» երևում են մշակույթի մեջ, և ուրախությամբ արձանագրում է, որ դարերը չեն կարողացել դիմազրկել մեր ժողովրդին նրա մտքի կառուցողական ուժի շնորհիվ: Կառուցողական ուժը ոչ միայն ներկա է մեր երկրում, այն սփռվել է Արևելք և Արևմուտք՝ մտքի թռիչք ու հոգու սլացք ներարկելով շատ երկրների մշակույթի: Ցավալի է, որ սեփականը թերագնահատելու մոլուցքը աղավաղում է մեր դիմագիծը: Մշակույթը այն խարիսխն է, որի շնորհիվ ժողովուրդը կարողանում է դիմակայել փոթորիկներին: Մշակույթը ժողովրդի հոգեկերտվածքի արտահայտությունն է:

20-րդ դարասկզբին պատմությունը կրկին խաչել է ճանապարհները և մեր երկիրը կանգնեցրել ընտրության առաջ: Որպեսզի ապացուցի իր այն համոզումը, որ մեր ժողովրդի լինելության խորհուրդը մշակութային ազգ լինելու մեջ է, Կ. Ջարյանը հանգամանալի քննության է ենթարկում մշակութային-աշխարհագրական երկու հասկացություն՝ Արևելքը և Արևմուտքը: Նա համակարծիք է գերմանացի փիլիսոփա Շպենգլերի հետ, որը կանխագուշակում էր Արևմուտքի մայրամուտը:

Գրողը Արևելքը համարում է մշակութային, ուր գերիշխողը հոգևորն է, ուր մարդն ու բնությունը, մարդն ու տիեզերքը ամբողջություն են կազմում, քանի որ նյութականը այստեղ երկրորդական է:

Արևմուտքը՝ Եվրոպան, ավարտել է մշակութային շրջափուլը և թևակոխել քաղաքակրթության շրջան, որը նրա մայրամուտն է խորհրդանշում:

Հայաստանը այս երկու բևեռների մեջտեղում է, և ընտրությունն անխուսափելի է: Ընտրությունը բարդանում է մանավանդ նրանով, որ Հայաստանն իր քաղաքական, ուրեմն և պատմական ճակատագիրը կապել է բոլշևիկյան Ռուսաստանի հետ: Ջարյանը տեսնում է, որ մարքսիզմը և լենինիզմը բուրժուական մտայնության վատթարագույն դրսևորումն են, որովհետև լենինիզմի գերագույն նպատակը նյութական արժեքներ ստեղծելն է: Գրողը Ռուսաստանն անվանում է մեռնող քաղաքակրթությունների օրրան: Ապացուցելով, որ բոլշևիկյան Ռուսաստանը նույն նպատակն է հետապնդում, ինչ իր մայրամուտն ապրող Արևմուտքը, Ջարյանը ցույց է տալիս նաև օտար գաղափարախոսության վտանգը, որը կարող է սպանել մեր ժողովրդի միտքը և ազատ ոգին: Հեղինակը քննում է նոր հասարակարգի էությունը, այդ հասարակարգը կառուցողների բարոյական կերպարը: Նոր հասարակարգ արարողների համար կարևորը գաղափարն է, որին ստորադասվում է անհատը: Այն մեռցնում հերոսներին, որոնք վեր են նյութից ու նյութականից, որոնք կազմակերպող են, արարող ու առաջնորդ: Այդ հասարակարգի համար մարդը նյութի շարունակությունն է, համայնքի մասնիկը, որը արժեք ունի այնքան ժամանակ, քանի դեռ օգտակար է նյութ արարելու համար, ընդ որում օգտակարության չափանիշը նրա ստեղծած նյութի չափի և կշռի մեջ է:

Ազգի գոյացման և պահպանման կռվանը ինքնուրույն և սեփական մշակույթ ստեղծելը և ունենալն է, քանի որ մշակույթն է պայմանավորում ազգային գիտակցությունը և ազգի ամբողջականությունը: Ջարյանը կարևորում է «մշակութային ազգ» հասկացությունը, քանի որ ցեղ-ժողովուրդ-ազգ զարգացման ճանապարհին բարձրագույն արժեքը մշակութային ազգն է: Հենց նույն պատճառով էլ նա մեղադրում ու դատապարտում է բոլշևիկյան կառավարությանը մեր

ժողովրդին կեղծ իդեալներ պարտադրելու, մշակույթ ստեղծելու ձևեր ու մեթոդներ թելադրելու համար: Դա կսպանի հայ ոգու ինքնուրույնությունը, կխանգարի աշխարհը սեփական աչքերով տեսնելուն և արվեստի գործերում կառուցողական ոգու գոյացման ինքնուրոյն թափին: Դա, ի վերջո, մեր ազգը կտանի կործանման: Քննելով մեր ժողովրդի լինելության խորհուրդը՝ հեղինակը փիլիսոփայական հարց է առաջադրում՝ «լինե՞լ», թե՛ «լինել ձևացնե՞լ»:

Լինել, ըստ Զարյանի, նշանակում է համաշխարհային պատմության մեջ կատարել վերուստ նախասահմանված դերը, իսկ դա մեզ համար մշակույթ արարելն է և ստեղծագործ ազգ լինելը, քանի որ մշակույթի միջոցով պիտի ամբողջական դառնա ազգային ոգին: Մինչդեռ քաղաքակրթվելը՝ նյութական արժեքներ ստեղծելը նպատակ դարձնելը, կկործանի մեզ: Նյութական արժեքներ ստեղծելը պետք է ծառայեցնել մեր ժողովրդի համար գերակա խնդրին՝ մշակույթ արարելուն: Այս դեպքում մեր ժողովուրդը կարող է հաստատել իր լինելության խորհուրդն ու փաստը: «Լինել ձևացնել» նշանակում է ապրել և գոյություն ունենալ միայն զարգացած տնտեսական միավոր լինելու համար, այսինքն՝ քաղաքակրթվել, որը, ըստ Զարյանի, նշանակում է ջնջել ազգային ավանդույթները, մոռանալ կրոնական-բարոյական-հոգևոր յուրահատկությունները, վտանգել լեզվի ամբողջականությունը: Սա կնշանակեր աղավաղել մեր ինքնությունը և միայն հային բնորոշ յուրահատուկ ոգին:

Այսպիսով, իր երեք վեպերում Կոստան Զարյանը ներկայացնում է մեր ժողովրդի ապագայի իր տեսլականը՝ հաստատելով, որ առանց գաղափարաբանության ժողովրդի զարգացման ընթացքը հնարավոր չէ պատկերացնել: Քանի որ յուրաքանչյուր ժողովուրդ ներկայանում է որպես ոգու և գաղափարի յուրահատուկ ամբողջություն, ուստի ամեն մի միջամտություն կարող է աղավաղել այդ ամբողջականությունը: Ընդունելով, որ քաղաքակրթության առաջընթացը կասեցնել հնարավոր չէ, գրողը, այնուամենայնիվ, կարծում է, որ նոր գաղափարաբանությունը պետք է հիմնվի երկիր-ժողովուրդ-ոգի միասնության գաղափարի վրա: Կարևորելով մանավանդ ազգային ոգին (միթոսը)՝ Զարյանը կարծում է, որ հենց մշակույթն է կոչված պահպանելու մեր ազգի յուրահատկությունը, ուրեմն և հարատևությունը:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ԱԶԳԱՅԻՆ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՀԱՅԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐՅԱՆԻ ՎԵՊԵՐՈՒՄ**

### ***2.1. «Նավը լեռան վրա» վեպի երևանյան հրատարակությունը***

Կոստան Զարյանն իր երեք վեպերում խոսում է բուլշևիկյան գաղափարախոսության մասին: Նա ոչ միայն ցույց է տալիս, թե ինչպես է մարդը ստորադասվում գաղափարին, և հանուն գաղափարի ինչպիսի դաժանությունների է ենթարկվում հասարակությունը, այլև, որ այն, օտար լինելով հայի կերպին, աղավաղում է հայ մարդու ներաշխարհը և խոչընդոտում մեր պատմության առաջընթացին: Նա երբևէ չէր մտածի, որ ինքը և իր ստեղծագործությունը դառնալու են այդ գաղափարախոսության և նրանից բխող քաղաքականության զոհը:

Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը երկու հրատարակություն է ունեցել՝ 1943-ին Բոստոնում և 1963-ին Երևանում: Արդյունքում ընթերցողի սեղանին դրված են նույն վերնագրով երկու տարբեր գրքեր՝ ասելիքի նպատակի և կերպի առումով, թեև գործողությունները գրեթե նույնն են, հերոսները՝ նույնպես:

Թե՛ Սփյուռքում, թե՛ Հայաստանում լույս են տեսնում բազմաթիվ հոդվածներ, որոնց հեղինակները քննադատում կամ չեն ընդունում երկրորդ գրքի ծնունդը: 1964 թվականին՝ «Նավի» երևանյան հրատարակությունից անմիջապես հետո, լույս է տեսնում Պողոս Սնապյանի «Ավազախրած նավը» վերլուծական աշխատությունը: Պ. Սնապյանը չափազանց խիստ է մոտեցել երկրորդ հրատարակությանը. որքան որ արժևորել է բոստոնյան հրատարակությունը<sup>3</sup>, նույնքան էլ քննադատել է երևանյան հրատարակությունը՝ Կ. Զարյանին մեղադրելով հեղիեղուկության, երկերեսանիության և այլ մեղքերի համար<sup>4</sup>: Եթե խորհրդային գրողներն ու արվեստագետները չէին կարողանում խոստովանել կատարված փոփոխությունների իրական պատճառները, ապա սփյուռքահայ գրողներն ու գրաքննադատները չէին կարող հասկանալ, քանի որ պատկերացում չունեին, թե գաղափարական ինչպիսի ճնշման էին ենթարկվում գրողներն ու արվեստագետները խորհրդային երկրում:

Ինչո՞ւ էր Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը այդքան կարևորում սովետահայ գրաքննադատությունը, ինչո՞ւ հենց այս գիրքը ընտրվեց խեղաթյուրելու համար:

Կոստան Զարյանի գեղարվեստական երեք գրքերը ներկայացնում են Հայաստանի համար բարդ ժամանակաշրջան, երբ կազմավորվում է Առաջին հանրապետությունը, նրա ամկմանը հաջորդում է խորհրդային կառավարությունը, այդ համապատկերում ներկայացվում են բոլշևիկներն ու բոլշևիկյան գաղափարախոսությունը, այդ գաղափարախոսության նկատմամբ ժողովրդի և հեղինակի վերաբերմունքը: «Նավը լեռան վրա» վեպում է այնքան լավ երևում աշխարհաքաղաքական մեծ շարժումներից Հայաստանի օտարվածությունն ու ողբերգությունը, «եղբայրական» ժողովուրդների գազանային վերաբերմունքը մեր նկատմամբ և մեր ժողովրդի տոկոսությունն ու ոգու վեհությունը, ինչպես նաև ազգային ամբողջականությունը: Եթե խորհրդային իշխանությունները կարողանային իրենց հետաքրքրող գիրքը հրատարակել փոխված գաղափարախոսությամբ, դա կնշանավորեր սովետական գաղափարախոսության հաղթանակը:

«Նավը լեռան վրա» վեպի երևանյան հրատարակությունից հետո Զարյանի շուրջ խոր լուռություն տիրեց, որը շարունակվեց նրա մահվանից հետո էլ: Խորհրդային գրաքննիչներն ու գրաքննադատները կարողացան այնպիսի մթնոլորտ ստեղծել հայրենիք տեղափոխված գրողի շուրջ, նրա կերպարի մասին այնպիսի կարծիք ձևավորել, որի կարծրատիպը գրեթե պահպանվում է մինչև այսօր:

<sup>3</sup>Սնապյան Պ., Ավազախրած նավը, Պէյրոս, 1964, «Պատմական այդ ժամանակաշրջանի պատմական բոլոր անցուղարձներուն ու դէպքերուն թելադրած բոլոր երեսոյթնորը վերլուծած, բոլոր երեսոյթներուն մասին իր խօսքը ըսած գիրքն է ան: «Նավը լեռան վրայ» վեպին մէջ տրուած է Հայաստանի բովանդակ փիլիսոփայութիւնը» (Նախաբան):

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 153, «Կ.Զարեան միայն «մաքրաջրած» չէ իր վեպը, այլ նաեւ մշուշագրած է գայն: Տեղական պայմաններուն յարմարելու իր ճիգը յաճախ դաւաճանած է իրեն ու ակներեւ դարձուցած է կատարուած խաղը»:

## **2.2.«Նավը լեռան վրա» վեպի երևանյան և բոսփորնյան հրատարակությունների համեմատական քննություն**

«Նավը լեռան վրա» վեպի երևանյան հրատարակությունը Հայաստանի իշխանությունների կողմից երկար մտածված և նպատակաուղղված աշխատանք էր Կոստան Զարյանին ճնշելու, վարկաբեկելու և լռեցնելու համար. այս պարագայում բոլորովին էլ կարևոր չէ խմբագրման աշխատանքներին հեղինակի մասնակցության աստիճանը:

Որպես իսկական գեղագետ՝ Զարյանը մանրակրկիտ ընտրում է ասելիքի ձևը, պատկերավորման միջոցները, որոնք ասելիքը ընթերցողի համար ավելի ներազդուն են դարձնում: Զարյանի յուրահատուկ լեզուն, որը արևելահայերենի և արեւմտահայերենի գեղեցիկ համադրություն է ներկայացնում, և յուրահատուկ աշխարհայացքը, որի միջոցով գրողը ձևավորում է իր ասելիքը, ստեղծում են վեպեր, որոնց տեսակը հնարավոր չէ որոշել վեպի ավանդական բնորոշումներով ուղղորդվելով: Ստեղծագործությունների լեզվամիջոցների ընտրությունը, գեղարվեստական պատկերների կատարելությունը, ստեղծագործության կառուցվածքի յուրահատուկ հնարանքը, ինչպես նաև սյուժեի զարգացման ինքնօրինակ ընթացքը Զարյանի յուրաքանչյուր գործ դարձնում են բովանդակության ու ձևի անքակտելի ամբողջություն: Խոսքը հասցնելով այնպիսի կատարելության, ինչպիսին թույլ են տալիս իր աշխարհայացքը և տաղանդը, Զարյանը ցանկանում է և կարողանում է առավելագույնս ազդել ընթերցողի մտքի և ներաշխարհի վրա: Նրա ստեղծագործությունների միջոցով ընթերցողը տեսնում է, զգում, հայտնաբերում հայ ժողովրդին ու այն Հայաստանը, որ մինչ այդ կարծես թե գիտեր, հիանում է, ոգևորվում ու ցավում է իր ժողովրդի ու հայրենիքի համար, հայտնաբերում է այն ճշմարտությունները, որոնք հեղինակն է հայտնաբերում իր ընթերցողի համար: Զարյանը իր ստեղծագործության միջոցով կարողանում է երկխոսության մեջ մտնել ընթերցողի հետ:

1963 թվականին հրատարակված «Նավը լեռան վրա» վեպում ընդհատված է երկխոսությունը խմբագրման հետևանքով առաջացած հետևյալ փոփոխությունների պատճառով՝

1. կառուցվածքային,
2. իմաստային,
3. ոճական և պատկերային համակարգը աղավաղող,
5. գաղափարական,

որոնց պատճառով ընթերցողին է հրամցվել ստեղծագործություն, որը ոչ մի կապ չունի հեղինակի մտահղացման և նպատակի հետ:

Ճիշտ ընտրված բառը կամ բառակապակցությունը, նախադասության չափը, պարբերությունները ապահովում են գրողի խոսքի հանգն ու ուժով, որոնք էլ իրենց հերթին ստեղծում են այն յուրահատուկ երաժշտությունը, որը գեղարվեստական պատկերների հետ ազդում է ընթերցողի զգացմունքների վրա: Յուրաքանչյուր գրողի ոճի յուրօրինակությունը նրա գեղարվեստական մտածողության արդյունքն է: Գրողը, յուրահատուկ պատկերային համակարգ ստեղծելով, կարողանում է արտահայտել իր մտքերը և ընթերցողի վրա

առավելագույն ազդեցության շնորհիվ իր ասելիքը տեղ հասցնել: Վեպի երկու հրատարակությունների համեմատությունից պարզվում է, որ խմբագրման ընթացքում կատարվել են այնպիսի փոփոխություններ, որոնք փոխել են հեղինակի կողմից հղացված, մանրակրկիտ աշխատված պատկերները:

Ամենաէականը, իհարկե, վեպի գաղափարը փոխող խմբագրումներն են, որոնք կատարվել են գրաքննության պահանջներով: Գաղափարական փոփոխությունները մի քանի կարևոր պահանջներ էին առաջադրում.

ա) «Անհրաժեշտ է որևէ ձևով ցույց տալ, որ այդ տարիներին հայ ժողովրդի ողբերգական վիճակը հետևանք էր Դաշնակցության արկածախնդրական և աղետաբեր քաղաքականության»<sup>5</sup>:

բ) «Ավելի հստակ դրսևորել հեղինակի կամ նրա դրական հերոսների վերաբերմունքը դեպի բոլշևիկները (ուղղումներ մտցնել բոլոր այն տեղերում, ուր խոսվում է բոլշևիկների և քեմալականների փոխհարաբերության, կամ այն մասին, թե բոլշևիկները ռուսական հացով էին զայթակեցնում ժողովրդին և այլն)»:<sup>6</sup>

գ) «Հնարավորության սահմաններում պետք է վերախմբագրել կամ բոլորովին հանել ազգամիջյան ատելության ամեն մի արտահայտություն (վիրավորական արտահայտություններ ռուսների, թուրքերի, վրացիների հասցեին և այլն)»:<sup>7</sup>

դ) «Վերախմբագրել... ազգային ոգու կամ ազգային ու ցեղային բացառիկության ամեն մի դրսևորում, փոքր ժողովուրդների ազգային ոգու հակադրումը մեծ ժողովուրդներին...»:<sup>8</sup>

ե) Խմբագրված տարբերակում չպետք է մնային ոչ միայն ռուս, այլև մյուս «եղբայրական» ժողովուրդներին վիրավորող մտքեր: Այդ պատճառով էլ փոխվել կամ ընդհանրապես հանվել են շատ հատվածներ: Խմբագրված տարբերակում ընթերցողը ստացել է այն պատմությունը, որը ձեռնառու էր խորհրդային պատմագիտությանը:

Գրքից դուրս են մնացել բավականին մեծ հատվածներ, որոնք պատմում են Առաջին հանրապետության հաջողությունների, դաշնակցականների նկատմամբ ժողովրդի դրական վերաբերմունքի մասին: Փոխվել են բառեր, արտահայտություններ, նախադասություններ: Բնագրից կրճատվել են բոլշևիկների իրական դեմքը ներկայացնող բոլոր հատվածները, երբեմն էլ կատարվել են հավելումներ և փոփոխություններ: Այս փոփոխությունները նույնպես աղավաղվել են պատմական ճշմարտությունը, ինչպես նաև փոխել վեպի գաղափարական ուղղվածությունը:

Գրքում տարբերակված է երկու Ռուսաստան՝ ցարական և խորհրդային, սակայն հեղինակի և ժողովրդի վերաբերմունքը ռուսների նկատմամբ նույնն է: Խմբագրման ժամանակ դուրս են մնացել և՛ ցարական, և՛ խորհրդային ռուսներին անվանարկող հատվածները:

<sup>5</sup> Էդ. Թոփչյանի՝ 30.07.61 գրված կարծիքից, «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրուֆ, 2006, (առանձնատիպ ԻԶ հատորէն), էջ 311:

<sup>6</sup> Հայպետհրատի տնօրեն Մ.Դավթյանի դիտողություններից, «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրուֆ, 2006, (առանձնատիպ ԻԶ հատորէն), էջ 350:

<sup>7</sup> Հայպետհրատի տնօրեն Մ.Դավթյանի դիտողություններից, «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրուֆ, 2006, (առանձնատիպ ԻԶ հատորէն), էջ 349:

<sup>8</sup> «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրուֆ, 2006, (առանձնատիպ ԻԶ հատորէն), էջ 311:

Վեպից դուրս են մնացել կամ խմբագրվել են հատվածներ, որոնք բխում էին հեղինակի կարևորագույն նպատակից՝ ցույց տալ մեր ժողովրդի յուրօրինակությունը, ոգու ուժը, սերը հայրենիքի նկատմամբ և հանուն հայրենիքի պայքարելու անձնագրոհության պատրաստակամությունը:

Երկու հրատարակությունների համեմատությունը ցույց է տալիս, որ «Նավի» խմբագրման ընթացքում խախտվել է ստեղծագործության ամբողջականությունը. առաջացել են կառուցվածքային, իմաստային և ոճական փոփոխություններ: Շատ բառ-պատկերներ իմաստազրկվել են, լեզվական տարրերը կորցրել են գեղագիտական նշանակությունը, իսկ ամենակարևորը՝ փոխվել է վեպի գաղափարական բովանդակությունը: Խախտվել է ասելիքը ընթերցողին հասցնելու հեղինակի ցանկությունը և իրավունքը: 1963թ հրատարակված գիրքը ընթերցողին զրկում է այդ հնարավորությունից, քանի որ հեղինակ-ընթերցող կապի փոխարեն ստացվել է հեղինակ-խմբագիր-ընթերցող միջնորդավորված կապը, և ընթերցողը չի կարողանում հեղինակին ճիշտ գնահատել: Երկու գրքերի համեմատությունը թույլ է տալիս ասել, որ ընթերցողի սեղանին 1963 թվականին դրվել է գիրք, որը Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» ստեղծագործության խղճուկ նմանակումն է միայն:

### **2.3. «Անցորդը և իր ճամփան» վեպը**

Կոստան Զարյանը «Անցորդը և իր ճամփան» վեպի խորագրի տակ նշել է վեպի տեսակը՝ համայնավեպ: Սակայն գրողը վեպը համարում է «Հայաստանում» պոեմ, որը «համայնադիցազներգական աշխարհագրագույն առաջին արտահայտությունն է» (158):

Երկու բացատրություն կարելի է տալ, թե ինչու է հեղինակն իր ստեղծագործությունը պոեմ համարում:

Գրողի համար Հայաստանը պոեմ է, քանի որ երկիրը, նրա բնությունը և բնակիչները նրան ներկայանում են որպես ներդաշնակ ամբողջություն, ինչպես պոեմն է մտքի ու զգացմունքի ներդաշնակություն կազմում: Երկրորդ. ամբողջ վեպը զգացմունք է և փիլիսոփայություն: Այս առումով Զարյանի ստեղծագործությունը կարելի է քննարկելիական պոեմ անվանել: Ամբողջ վեպի ընթացքում հեղինակը փորձում է հասկանալ, թե ինչ է Հայաստանը, որն է մեր ժողովրդի կեցության գաղտնիքը: Այս հարցերը իր և ընթերցողի համար պարզելիս նա վերլուծում և բացահայտում է ազգի հոգևոր կերտվածքը, էությունը, երկրի և բնության ազդեցությունը հայի տեսակի ձևավորման վրա, ցեղի հոգեբանության ազդեցությունը անհատի ձևավորման վրա, հայ ժողովրդի ազդեցությունը հարևան ժողովուրդների վրա: Վեպի մեջ այս հարցերը պարզաբանվում են զգացմունքային զեղումների և փիլիսոփայական դատողությունների միջոցով: Կարելի է ասել, որ այս վեպը նաև Զարյանի սիրո ու զգացմունքների պատմությունն է իր երկրի ու ժողովրդի նկատմամբ:

«Հայաստանում» պոեմը երկու գլուխներից է կազմված: Առաջին մասը ներառում է վեպի առաջին ութ գլուխները, որոնցում հեղինակը հիմնականում անդրադառնում է Արևմտյան Հայաստանին: Այս հատվածում նա գրում է մի քանի կարևոր հարցերի մասին, որոնց մենք հանդիպում ենք և՛ վեպի երկրորդ հատվածում, և՛ նրա մյուս ստեղծագործություններում.

1. մարդը հոգեպես և ենթագիտակցորեն կապված է այն տեղանքի հետ, որտեղ ապրում է. հոգին սեփական երկրի կարիքն է զգում,
2. հայ լինելը հեշտ չէ, և միգրացիոն նախախնամության ձեռքին հայը գաղտնի զենք է,
3. Սկյութարը հայ գրականության ոգին է,
4. Պոլիսը 1915 թվականի ոճրագործությունից հետո պարպել է իր խորքերում դարերով կուտակված բոլոր լուսավոր ճառագումները,
5. եղեռնը փոխել է մի ողջ ժողովրդի դեմքի արտահայտությունը,
6. խանութպանը գրավել է հայ կյանքի բոլոր ոլորտները,
7. Անցորդը իրեն համարում է մտքի հավիտենական ճամփորդ:  
«Հայաստանում» պոեմի երկրորդ մասում Անցորդը

նույնպես անդրադառնում է մի քանի կարևոր հարցերի.

1. ինչպես է մեր ժողովուրդը կարողացել դիմադրել հզոր հարևանների ֆիզիկական և հոգևոր ճնշումներին և պահպանել իր ինքնությունը,
2. մշակույթի ազգապահպան դերը,
3. զարգացման ինչ ուղի պետք է ընտրի մեր ժողովուրդը:

Հաստատվելով Երևանում՝ հերոսն ուսումնասիրում ու ճանաչում է ժողովրդին: Առաջին տպավորությունը՝ մարդիկ ժայռերի մեջ քանդակված արձանների են նման, և նրանց դեմքերի վրա կարելի է դարերի պատմությունը կարդալ: Անցորդի համար ցավալի է, որ բնության մաս կազմող հայ մարդը կույ է եկել ճակատագրի առջև:

Հեղինակը լուսանկարչական ճշգրտությամբ մանրամասնորեն նկարագրում է սոցիալիզմ կառուցող երկրի «հատակում» հայտնված մարդկանց: Կեղտը, աղքատությունը, սովը և դրանցից ծնված չարությունը կյանքի անարդարության, անզորության ու անհուսության նկատմամբ այս մարդկանց անբաժան մասն են դարձել: Նրանք պարփակվել են սեփական կեղևի մեջ, և ոչ ոք չի կարող նրանց հոգուց ներս նայել: Տառապանքը տանելի կլիներ, եթե մարդիկ ոգևորվեին սեփական ազատ հայրենիքը կառուցելու գաղափարով: Բայց նյութականի մաս դարձած մարդկանց համար հայրենիքը իմաստազուրկ արտահայտություն է դարձել, և ուժ չունեն մղձավանջից դուրս գալու: Գրողին սարսափեցնում է ճակատագրին հլու-հնազանդ ենթարկվելու նրանց պատրաստակամությունը:

Քննելով մեր պատմությունը, ուսումնասիրելով հայկական մշակույթը և, ամենակարևորը, հայ մարդուն, Ջարյանը գալիս է հետևյալ եզրահանգման: Հայը արարող է: Արարման խորհուրդն է եղել այն հզորագույն միջոցը, որը մեզ ապրեցրել է ու օտար հզորների հոգևոր, բարոյական ու քաղաքական ճնշումներին դիմակայելու հնարավորություն տվել: Հայի իմաստնությունը՝ գիտակցված թե ենթագիտակցական, ստիպել է հայ մարդուն հայացքը հառել դեպի սեփական հոգու խորքը, պեղել իր հոգու լույսը և այն դարձնել իր մշակույթի հիմքը: Գրողը կարծում է, որ մշակույթն է մեր միակ հարստությունը, որով հայ մարդն ապրում և ապրեցնում է իր երկիրը: Հայ մարդը խորապես մշակութային է:

«Հայաստանում» պոեմը ներկայացնում է երկու հակադիր եզրեր՝ Արևմտյան Հայաստան, որը ավարտված պատմություն է, և Խորհրդային Հայաստան, որը դեռ պիտի գրի իր դիցավեպը, սակայն իրականում պոեմի երկու գլուխներն էլ



հայությունը փնտրելու և իրեն հայության մեջ գտնելու Անցորդի հոգու պատմությունն են ներկայացնում:

Վեպի հիմնական թեման հայն է և հայությունը: Թե՛ անցյալում մնացած Հայաստանում, թե՛ նոր կառուցվող Հայաստանում հեղինակը փնտրում է հայությունը, ավելի ճիշտ՝ իր պատկերացրած ոգեղեն, յուրօրինակ, մշակութային ամբողջականությունը:

Ջարյանը գիտակցում էր, որ իր պատկերացրած մշակութային Հայաստանը ընդամենը գեղեցիկ երազ է, բայց չափազանց մեծ էր երազանքը իրականացած տեսնելու ցանկությունը:

## **ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ ՋԱՐՅԱՆԻ ԱՐՁԱԿԻ ԲԱՆԱՐՎԵՍԸ**

### ***3.1. Ջարյանի արձակի գեղարվեստական առանձնահատկությունները***

*Ա. «Անցորդը և իր ճամփան» վեպի  
ժանրային առանձնահատկությունները*

«Անցորդը և իր ճամփան» վեպի մասին կարծիքները միանշանակ չեն: Այն միգրացիոն կարելի է դասել հուշագրության շարքը (ինչպես Շ. Պերպերյանն է նշում<sup>9</sup>), քանի որ Ջարյանը հետադարձ հայացք է գցում իր հետ կատարվածի վրա՝ անցկացնելով իր զգացմունքների միջով և ներկայացնում որպես իր ապրածի վերլուծություն:

Վեպը հնարավոր է նաև ինքնակենսագրական համարել, քանի որ գլխավոր հերոսը հենց ինքը՝ հեղինակն է, իսկ Վարդան Մատթեոսյանի կարծիքով «Անցորդը և իր ճամփան» վեպը կարելի է ուղևորավեպ որակել:

Գրողի ստեղծագործությունների վերլուծաբաններից Մարկ Նշանյանը նույնպես վեպը համարում է ուղեգրության ժանրին պատկանող ստեղծագործություն:

Ա. Ավագյանը «Անցորդը և իր ճամփան» ստեղծագործությունը որակում է որպես գեղարվեստական վավերաթուղթ:

Օրինակները կարելի է շարունակել:

Գրողի ստեղծագործության մեկնաբանները տարբեր կերպ են ընկալում վեպի տեսակը և բազմապիսի որակումներ տալիս: Ուրեմն, Ջարյանի ստեղծագործությանը դասական մոտեցում հնարավոր չէ կիրառել, քանի որ մի քանի մեթոդներ համադրվում և հանդես են գալիս միասին, ժանրի մի տեսակը թափանցում է մյուսի մեջ:

«Անցորդը և իր ճամփան» վեպում բացակայում է դասական վեպի պատումը. այստեղ տեսնում ենք հեղինակին՝ իր խորհրդածություններով, փիլիսոփայական դատողություններով: Վեպում կա գործողության որոշակի ընթացք. Անցորդը իր ընտանիքով վերադառնում է հայրենիք, բայց իշխանության անհանդուրժողականության պատճառով երկու տարի հետո հեռանում է: Սակայն հեղինակի նպատակն է ներկայացնել 1920-ականների Հայաստանը, ճանաչել

<sup>9</sup> Պերպերյան Շ., Կ. Ջարյան՝ յավերժական ճամբորդը, «Բագին», ԺԺ տարի, թիվ 5 1980, մայիս, Պէյրուֆ:

ժողովրդին, փնտրել ու հասկանալ հայի էության գաղտնիքը: Այս փնտրտուքը հեղինակին ստիպում է անդրադառնալ և՛ մեր պատմությանը, և՛ մշակույթին, և՛ այլ երկրների՝ Հայաստանի նկատմամբ վերաբերմունքին, ինչպես նաև Հայի՝ այլ ժողովուրդների նկատմամբ վերաբերմունքին: Անցորդը ճամփորդում է երկրում, գրում ճամփորդությունների ընթացքում ծնված դատողությունները. այստեղից էլ՝ «ուղևորավեպ» բնութագիրը: Ճամփորդության ընթացքում հանդիպում է ամենատարբեր մարդկանց, որոնց մասին նրա խոսքը կարելի է ակնարկ կամ էսսե համարել: Վեպի առաջին ութ գլուխներում գրողի հիշողություններն են հետեղեռնյան Պոլսի և Պոլսում աշխատելու տարիների մասին. սա էլ ստիպում է կարծել, որ վեպը հուշագրություն է:

Քննելով վեպի կառուցվածքը, ի մի բերելով վեպի ժանրային առանձնահատկությունները՝ կարելի է ասել, որ գործ ունենք վեպի համադրական տեսակի հետ: Լինելով տարբեր գրական և փիլիսոփայական ուղղությունների ազդեցությունների ներքո՝ Ջարյանի մոտ ձևավորվել է յուրահատուկ աշխարհայացք, ասելիքն արտահայտելու յուրօրինակ ձև, որոնց միջոցով ընթերցողին է հասցնում իր խոհերը, իսկ արդյունքում՝ վեպ, որի տեսակը որակելը դժվար է: Ջարյանի երկերը տարակարծությունների տեղիք են տալիս այն պատճառով, որ դրանք վերուժելիս դասական մոտեցում է ցուցաբերվում:

#### *Բ.«Բանկոռպը և մամուլի ոսկորները» վեպը*

Մեր գրականագիտական միտքն ավելի շատ անդրադարձել է «Անցորդը և իր ճամփան» վեպի ժանրային առանձնահատկություններին, բայց «Բանկոռպը և մամուլի ոսկորները» վեպը քննելիս տեսնում ենք պատումի կառուցման նույն ընթացքը: Այստեղ նույնպես բացակայում է ավանդական վեպին բնորոշ պատումը, և միաժամանակ հանդես են գալիս ուղեգրությանը, օրագրային վեպին և հուշագրությանը բնորոշ առանձնահատկություններ:

Ի տարբերություն «Անցորդը և իր ճամփան» վեպի՝ այս վեպում հեղինակը կերտել է հերոսներ՝ ամեն մեկն իր պատմությամբ: Այդ պատմություններից յուրաքանչյուրն ունի իր նախադրությունը, հանգույցը, զարգացումը, գագաթնակետն ու լուծումը: Սակայն վեպը չունի ավանդական առումով գլխավոր հերոս. յուրաքանչյուր պատմություն ունի իր գլխավոր և երկրորդական հերոսները: Առանձին հերոսների մասին պատմությունները միահյուսվում են և դառնում գրողի հիմնական ասելիքը, թեև շատ հերոսներ գործողություններով կապված չեն, միմյանց չեն ճանաչում:

Վեպը չունի կոնկրետ սյուժետային ընթացք, բայց վեպի հիմնական ասելիքը ուրվագծվում և պարզվում է տարբեր հերոսների շուրջ ծավալվող իրադարձությունների և պատմությունների շնորհիվ: Ի վերջո հասկանալի է դառնում, որ վեպի գլխավոր հերոսներն են Հայաստանը և հայ ժողովուրդը՝ իրենց վեհությամբ ու ողբերգականությամբ, պարզությամբ ու յուրօրինակությամբ, հետամնացությամբ և միևնույն ժամանակ անհասանելի բարձրությամբ:

«Բանկոռպը և մամուլի ոսկորները» վեպի հետաքրքիր առանձնահատկություններից է այն, որ Կ.Ջարյանը գրքի մասերն անվանել է շրջաններ: Շրջանը վերադարձ է: Թեև դարերը հոսում են, և թշնամիները հաջորդում են միմյանց, սակայն մեր ժողովրդի համար անընդհատ կրկնվում են

նույն ցավն ու ողբերգությունը: Վերադարձ դեպի սկիզբ նշանակում է նաև վերադարձ դեպի անհատականություն, այսինքն՝ հավատարմություն էությանը:

Շրջանը նաև շրջագիծ է և պարփակում:

Շրջան՝ ամբողջություն է Հայաստանը՝ իր բնությամբ և իր ժողովրդով. չի կարելի այդ ամբողջությունը քանդել:

Կոստան Զարյանը «շրջան» բառով ամբողջացնում է իր ասելիքը, թե գիրքն ինչի մասին է՝ ժողովրդի և երկրի, անհատի և երկրի ամբողջականության, պատմության շրջափուլերի կրկնության, դեպի ինքնություն վերադառնալու անհրաժեշտության:

Այսպիսով, «Անցորդը և իր ճամփան» և «Բանկոպը և մամուփի ոսկորները» վեպերը ժանրային առանձնահատկությունների առումով էականորեն տարբերվում են դասական վեպից թե՛ կառուցվածքով, թե՛ ասելիքի ձևով:

### **3.2. Գեղարվեստական պարկերավորման սկզբունքները**

Գրողը կարևորում է գրական ստեղծագործության լեզուն: Նա լեզուն համարում է մշակույթի կարևորագույն մաս, որը չափազանց կարևոր է երկրի և ազգի պահպանման տեսանկյունից: Լեզուն ավանդույթ է, որը, պահպանելով իր էությունը, պետք է անընդհատ նորոգվի և նորանոր ձևերով հանդես գա: Երկիրը, ըստ Զարյանի, ներկայանում է ազգ և լեզու միասնությամբ և ամբողջությամբ: Լեզվի միջոցով է կայանում անհատների, անհատի ու հասարակության կապը, այդ պատճառով էլ գրողը կարևորում է խոսքի նշանակությունը: Նրա կարծիքով յուրաքանչյուր բառ մի աշխարհ է, «որը խոր հոգեկան իրականություն է»: Բառը ավանդություն է, որը ձևավորվել է դարերի ընթացքում բազմաթիվ սերունդների կողմից, երբ նրանց փորձը, մտածելակերպը, ոգին ամփոփվել են բառի մեջ: Բառի մեջ կուտակված ներքին իմաստը չի փոխվում, բայց ժամանակի ընթացքում կարելի է և պետք է նորանոր ձևեր հաղորդել նրան: Հենց այդ ժամանակ է բառը նոր պատկեր, նոր գունավորում և նոր կյանք ստանում: Ահա այստեղ է երևում գրողի հանձնառությունը, որը կոչված է պահպանել բառ-աշխարհի ներքին իմաստը, չքանդել ու չաղավաղել նրանում ամփոփված ավանդույթը, բայց նոր կյանք հաղորդել նրան:

Գրողն ստեղծում է բառ-խորհրդանիշեր ու բառ-պատկերներ, որոնք անհրաժեշտ են նրան՝ իր միտքն ու զգացմունքները լիարժեք արտահայտելու համար: Զարյանը կարողանում է թափանցել իրերի և երևույթների խորքը և հայտնաբերել կարևորը, երբեմն էլ սովորական ընթերցողի համար անտեսանելին: Այդ անտեսանելին մեր առջև բացվում է նաև խորհրդանիշերի միջոցով:

«Անցորդը և իր ճամփան» Կ. Զարյանի գեղարվեստական արձակի վեպերից առաջինն է, որտեղ ընթերցողը հանդիպում է «նավ» խորհրդանիշին:

Նավը խորհրդանշում է այսրաշխարհն ու անդրաշխարհը կապող օղակ, կամուրջ: Քրիստոնեության մեջ նույնպես նավի խորհրդանիշը կա. եկեղեցին փրկության տապան է և պաշտպանում է փորձություններից:

Նավի մասին միտքը շարունակվում է «Նավը լեռան վրա» վեպում՝ դառնալով կենտրոնական խորհրդանիշերից մեկը: Նավը այդ վեպում Հայաստան-հայրենիքն է: Այս մտքին գրողն անդրադառնում է տարբեր ստեղծագործություններում:

Խորհրդային գրաքննադատների վերլուծականներում նաև խորհրդանշում է պետությունը, այսինքն՝ «պետություն» և «հայրենիք» հասկացությունների միջև հավասարության նշան է դրվել, որը չի ընդունում Կոստան Զարյանը. վեպում տեսնում ենք «հայրենիք» և «ազգ» ամբողջությունը: Պետությունը հայրենիք չէ և ազգ չի ձևավորում: Ազգը բարձր է պետությունից: Պետականության տեսակները միմյանց են հաջորդել մեր ժողովրդի պատմության ընթացքում, բայց հայրենիքն ու ազգը նույնն են մնացել, նույնն է մնացել նաև ժողովրդի վերաբերմունքը իր երկրի նկատմամբ: Հենց այս պատճառով էլ Խորհրդային Հայաստանը, որը պետականության հերթական ձևն էր, չէր կարող փրկության տապան դառնալ հայության համար: Նավ՝ Հայաստան՝ հայության փրկության տապան, և լեռ՝ վեհացում, խորհրդանիշերի զուգադրումն է գրողը մատուցում «Նավը լեռան վրա» վեպում:

«Ծով» խորհրդանիշին նույնպես հանդիպում ենք նշված վեպերում: Անցորդի համար ծովը անցյալի և ներկայի սահմանն է խորհրդանշում: Նա տեսնում է, որ հայությունը մնացել է այդ սահմանի վրա, որովհետև չի գտնում անցյալից դուրս գալու և դեպի ապագա գնալու ճանապարհներ, չունի առաջնորդներ, չունի ապրելու նպատակն ու փիլիսոփայությունը կյանքի կոչող ուժեր:

Նշված վեպերում Կ. Զարյանը կարևորում է «լեռ», «դաշտ» խորհրդանիշերը: Հեղինակը մեծ խորհուրդ է տեսնում և՛ Արարատյան դաշտի, և՛ Արարատ լեռան մեջ: Նա համոզված է, որ աշխարհաստեղծման ժամանակ այս դաշտն ու լեռը անիմանալի խորհուրդներ են առել իրենց մեջ:

Դաշտը կանացի սկիզբն է, խորհրդանշում է արգասավորություն ու կյանք և լույս է ճառագում: Լույսը տիեզերական ուժի խորհրդանիշն է, անմահություն, անսահման բարության ու ճշմարտության խորհրդանիշը: Արգասավորությունն ու կյանքը միախառնվել են անմահությանը, բարությանն ու ճշմարտությանը, և դա է պայմանավորել, որ Արարատյան դաշտը դառնա հայության օրրանը:

Արարատյան դաշտը ոչ միայն լույս, այլև աստվածային երաժշտություն է ճառագում, և օտար ձայները այստեղ լուրմ են: Այն ճակատագրական վայր է. որպես մեր օրրան՝ այն հայ մարդու համար տիեզերքի մեջ մեծ դեր է նախապատրաստել, որը մենք չենք գիտակցում: Պետք է կարողանալ լռել ու լռեցնել մեր մեջ հնչող բոլոր օտար ձայները՝ աստվածային խոսքը լսել կարողանալու համար: Զարյանը կարծում է, որ Արարատյան դաշտը այն վայրն է, ուր կուտակվել է մեր ժողովրդի բարությունը, ստեղծագործելու ունակությունը, ազնվությունը, սերը երկրի ու հայրենիքի նկատմամբ: Երբ տեղի է ունենում մարդու և երկրի միասնությունը, երբ մարդն ու երկիրը ամբողջություն են դառնում, դաշտը ճառագում է այն խորհրդավոր լույսը, որը խոսում է մարդու ներքինի հետ:

### ***3.3. Կերպարակերպման առանձնահատկությունները Զարյանի վեպերում***

Զարյանն իր ստեղծագործություններում անցորդ է, դիտորդ, ասացող և որպես այդպիսին՝ իր ճանապարհին հանդիպում է բազմաթիվ ու բազմապիսի մարդկանց: Ոմանց հետ հանդիպումը երկարատև է, ոմանց հետ՝ կարճ, կան նաև հպանցիկ հանդիպումներ: Միննույն է, Զարյանը կերտում է հյութեղ, իրական, ամբողջական կերպարներ, որոնք չեն մոռացվում, որոնց ճակատագրերի մասին ընթերցողը

շարունակում է մտածել: Նրա կերտած ուժեղ ու ամբողջական կերպարների շնորհիվ ընթերցողը կարողանում է «տեսնել» նրանց միջավայրը, գաղափար կազմել նկարագրվող ժամանակաշրջանում մարդկային փոխհարաբերությունների մասին և, ամենակարևորը, հասկանալ հային: Եթե ավելացնենք նաև հեղինակային դատողությունները, վերլուծությունները՝ որպես նույն միջավայրի հերոսի վերաբերմունք ու ապրումներ, ապա հասկանալի է, թե ինչու են ընթերցողի համար կենդանի ու վառ պատկերանում և՛ ժամանակաշրջանը, և՛ հայ ոգու իրականությունը:

#### *Ա. Եղենից փրկվածները և խորհրդայնացող Հայաստանը*

Ետերգության բոլոր գրքերում էլ Կոստան Զարյանը այս կամ այն կերպ անդրադառնում է 1915 թվականի դեպքերին: Սակայն «Բանկոպը և մամուփ ոսկորները» վեպում մենք տեսնում ենք անդրադարձ ոչ միայն ողբերգությանը, ողբերգությունը վերապրածների հիշողությանը, այլև փրկվածների ճակատագրերին, որի նպատակն է նաև այդպես ներկայացնել խորհրդային Հայաստանի վիճակը:

Ի՞նչ ապագա կարող են ունենալ որբերը: Այս հարցին գրողը Հայկի, Տիրայրի և Սրբիկի կերպարների միջոցով է պատասխանում:

Հայկը չի ցանկանում ուրիշի պարտադրած երազանքով ապրել և ընդհանուր երազանքի ակամա մասնակիցը լինել: Հենց այդ պատճառով էլ նա փողոցը գերադասում է Որբերի գյուղից, գերադասում է սեփական երազանքներն իրականացնելու դժվար, անորոշ ճանապարհը լուսի շող չունեցող, ճահճային, պարտադրված վիճակից: Հայկը երազում էր մի այնպիսի երկրի մասին «ուր մարդիկ ու կանայք գեղեցիկ են, ուր արդարութիւն է տիրում, ուր կտոր հացի համար կոհի չկայ, ուր թշուառութիւն, կեղտոտութիւն եւ հիվանդութիւն չկայ...»:<sup>10</sup> Սակայն ընկեր Աղասու հետ հանդիպումը ճակատագրական է դառնում այս պատանու համար: Հայկի միտքն ընկալում է ժամանակի պահանջը, և նա, մաքրելով ուղեղը հին, «անպետք» մտքերից, տեղ է բացում նոր գաղափարների համար: Հայկը կամաց-կամաց հրաժարվում իր ինքնությունից, վերածնվում, վերափոխվում, վերածնվում է՝ դառնալով օրինակելի կուսակցական: Հայկի նմանները շատ են: Նրանց վերափոխման համար, ճիշտ է, մեղավոր են աղքատությունը, թշվառությունը և սովը, բայց ավելի շատ՝ գաղափարախոսությունը, որի համար պարարտ հող էր սոցիալական վիճակը: Գաղափարախոսությունը, նվաճելով մարդկանց միտքը, շեշտը դնելով ստամոքսի վրա, դատարկում էր նրանց սիրտն ու հոգին:

Կ. Զարյանը կարողացել է ներկայացնել բուլճարական գաղափարախոսության իմաստը, Հայկի կերպարի միջոցով ամբողջացնել բուլճարական էությունը, նպատակը: Հեղինակը մեզ բերում է այն եզրակացության, որ բուլճարկները չեն կարող հումանիզմի կրողը դառնալ: Նրանք ոտնահարում են մարդու համար ամենանվիրականը՝ ազգ, հայրենիք, կրոն: Ըստ այս տրամաբանության՝ հաջորդ անպետքությունը, որ պիտի դեն նետվի, կլինի մայրենին: Կարծում ենք, որ այս հերոսին հեղինակը պատահական չի անվանել Հայկ: Հայկը մեր ժողովրդի

<sup>10</sup> Զարեան Կ., Բանկոպը եւ մամուփ ոսկորները, Անթիլիաս, 1987, էջ 141:

խորհրդանիշն է, և գրողը տագնապում է. մի՞թե Հայկը իրոք ժողովրդի ապագա վերափոխումն է ներկայացնում, արդյոք բոլշևիկյան գաղափարախոսությունը մեր ժողովրդին պիտի նոր հայկերի հասարակությամբ վերածի:

Տիրայրը, ի հակադրություն Հայկի, շատ համեստ երազանք ունի՝ ստեղծել իր ընտանիքը, ունենալ սեփական տունը և չհիշել մեծ ողբերգությունը: 1915-ին ապրած նրա ողբերգությունը ավելի դաժան շարունակություն է ունենում, երբ պարզվում է, որ նորապսակները՝ Տիրայրն ու Սիրանը, քույր ու եղբայր են: Միմյանց գտած լինելու ուրախությունը ավելի է սաստկացնում ողբերգության ցավը: Տիրայրը մի ելք է տեսնում միայն. գիշերով գնում է կայարան ու պառկում գնացքի գծերին:

Որբերի կոմունաններից մեկի մեջ էր Սրբիկը՝ ոտաբոբիկ, ցնցոտիներով, բայց հպարտ ու հմայիչ: Ինչպես Հայկի, այնպես էլ Սրբիկի անունը պատահական չի ընտրել հեղինակը: Սրբիկ՝ կեղտի, ցնցոտիների, թշվառության մեջ թաքնված մաքրություն, որը ոչ մեկին պետք չէ: Եվ դրանից ավելի դաժան ու անարդար է թվում ժամանակը:

Սրբիկը մաքրություն էր, իսկ նրա երեխան՝ նոր կյանքի խորհրդանիշը, Սրբիկի և նրա նմանների ապագան: Աներևակայելի չարչարանքների միջով անցնելով, զարմանալի է, բայց Սրբիկը ողջ է մնում: Ընթերցողի մոտ փրկության հույս է ծնվում: Ծննդաբերության ցավերի մեջ՝ Սրբիկը հայտնվում է մոտակա գյուղի գոմում: Աստվածածնի նման նա էլ ծննդաբերում է գոմում և երեխային երջանիկ սեղմում կրծքին:

Բայց ճակատագրով դատապարտվածները երջանկության հույս չեն կարող ունենալ: Սրբիկը մեռնում է: Սոսկալին այն է, որ հիվանդանոցում, ուր տեղափոխել էին անգիտակից աղջկան, «որք մնացած թի 34 տղու անունը դրին Ֆեդերացիա»: Ուշադրություն դարձնենք. 34-րդ, ոչ թե 33-րդ: Սրբիկի տղան չէր կարող նոր Քրիստոս ու նոր Փրկիչ դառնալ: Մինչդեռ Սրբիկը տարավ Աստվածամոր բոլոր տառապանքները:

Այս երեք կերպարների միջոցով Զարյանը ցույց է տալիս եղեռնից փրկվածների դատապարտվածությունը նոր կերտվող հասարակության մեջ:

#### *Բ. Ժողովրդավարական երկիրը և «ավելորդ» մարդիկ*

«Բանկոռպը և մամուֆի ոսկորները» վեպում գրողը կերտել է «ավելորդ» մարդկանց կերպարներ՝ լեզվաբան, պատմաբան, պրոֆեսոր, ճարտարագետ, որոնք հիշեցնում են Հակոբ Պարոնյանի մուրացկաններին: Բայց եթե «Մեծապատիվ մուրացկաններում» ծաղրի շղարշը հետ քաշելով ենք հասկանում մուրացկանների ցավը, ապա «Բանկոռպը և մամուֆի ոսկորները» վեպում Կ. Զարյանը թվացյալ անտարբերությամբ է ներկայացնում «անպետք» մարդկանց ողբերգությունը: Ժամանակին նրանք կարողացել են սեփական աշխատանքով ապահովել իրենց արժանավայել կյանքը, իսկ որ ավելի կարևոր է, բոլորն էլ հարգված ու պահանջված են եղել: Ի վերջո մարդու համար անչափ կարևոր է պետքական լինելու համոզումը. իր կարևորությունը ապացուցելու համար մարդն ընդունակ է և՛ սխրագործության, և՛ չարագործության: Ավելորդ դարձած այս մարդիկ կորցրել են մի շատ կարևոր բան ևս՝ հանունը: Եթե չկա հանունը, կյանքն անիմաստ ու իզուր է դառնում: Կորցնելով լինելության խորհուրդը՝ նրանք նույնիսկ հույս չունեին, թե ապագայում որևէ բան կփոխվի: Նրանց մնում է ապրել

հիշողություններով, իսկ գիշերները տառապանքից չքնել: Կոստան Զարյանի ավելորդները համակերպվել են պարտադրված վիճակին, և դա առավել քան ողբերգական է: Երբ համեմատում ենք մուրացկաններին և ավելորդ մարդկանց, հետաքրքիր եզրակացության ենք գալիս. թեև բոլորովին այլ ժամանակաշրջան է ու այլ գաղափարախոսություն, բայց հասարակության վերաբերմունքը գիտության ու արվեստի մարդկանց (և ընդհանրապես մարդկանց) նկատմամբ նույնն է: Եթե հասարակության համար ավելորդ են արվեստագետն ու գիտնականը, արդյո՞ք տգետ, դատարկ, նյութամուլ ու նյութապաշտ, կեղծավոր չէ հասարակությունը: Եվ այդ հասարակությունն արարում էին բուլձևիկները:

#### Գ. Հայաստանը օտարերկրացիների աչքերով

«Բանկոռպը և մամուլի ոսկորները» վեպում Զարյանը ոչ միայն նկարագրել է տեղական իշխանությունների ներքին քաղաքականությունը, ոչ միայն Մոսկվայի, այլև օտար երկրների վերաբերմունքն ու հետաքրքրությունները մեր երկրի նկատմամբ՝ նաև իր կերտած հետաքրքիր կերպարների միջոցով:

Տարբեր երկրներից եկած մի քանի օտարերկրացիների ենք հանդիպում Որբերի գյուղում. նրանք չեն ճանաչում այն երկիրն ու ժողովրդին, որի ճակատագրին ցանկանում են միջամտել:

Միստր Գրեյի համար կյանքում երկու կարևոր բան կա՝ Ավետարանը և դոլարը: Նա մի քանի տարի Ավետարանի ճշմարտություններն է քարոզել Արևմտյան Հայաստանում, իսկ 1915 թվականի դեպքերից հետո եկել է Արևելյան Հայաստան՝ իր գործը շարունակելու: Նրա համար միևնույն է (կամ միգուցե չգիտի՞), որ Հայաստանը «Ավետարանը ճանաչում է նրանցից հարիւրաւոր տարիներ առաջ»<sup>11</sup>: Ի՞նչ պիտի տա այս մարդը հայերին: Եվ այսպիսիները այնքան շատ են, որ ակամա մտածում են՝ նրանց միակ նպատակը ժողովրդին շեղելն է ճակատագրով նախագծված ճանապարհից: Ուրեմն Կ. Զարյանը իրավունք ուներ ասելու, որ մեր երկրին մենակության լուրջություն է պետք:

Թոմ Օկոնորը երիտասարդ է, թեև անցել է պատերազմի բովով և հարստացել կյանքի փորձով: Այլևս չկարողանալով վերադառնալ նախապատերազմական հանգիստ կյանքին՝ նա Հայաստան էր եկել՝ թերթերից տեղեկանալով պատերազմի, կոտորածի, սովի մասին: Սակայն մորթվող ժողովրդի հոգեցունց տեսարանների փոխարեն նա հայտնաբերել էր իրական Հայաստանն ու հայ ժողովրդի էությունը: Դա տեղի էր ունեցել, երբ նա տեսել էր իր առջև փռված Արարատյան դաշտի ներքին ճառագումը: Հայ երկիրը, որն իր մեջ կուտակել է հայ մարդու վերասլաց միտքը, ազնվությունը, աշխատասիրությունը, սերը մայր հողի նկատմամբ և բոլոր այն բաները, որոնք մարդուն մարդ ու անհատականություն են դարձնում, այժմ ճառագում էր օտար ավերից եկած այդ մարդու համար: Դա լինելության խորհուրդը հասկանալու համար ավելին էր, քան համալսարաններ ավարտելը: Այդ լուսարձակումը տեսնողը մաքրվում է անհատականության աղավաղումից այնպես, ինչպես ապաշխարողը: Դաշտից ճառագող լույսը մարդուն ցույց է տալիս դեպի սեփական էություն տանող ճանապարհը: Դաշտից բխող վեհությունը և մաքրությունը Օկոնորին միացնում են բնությանը և դարձնում

<sup>11</sup> Զարեան Կ., Բանկոռպը եւ մամուլի ոսկորները, էջ 196:

ամբողջություն: Օկոնորը մաքրվում է քաղաքակրթական այն աղբից, որը նա կուտակել էր կրթության, մարդկանց հետ հարաբերությունների, տարբեր բարոյախոսությունների ու գաղափարախոսությունների ազդեցությամբ: Նախկին սպան հասկանում է, որ օտար, ամայի ու թշվառ այս երկրում ինքը, գտնելով ամբողջանալու խորհուրդը, այլևս անկարող էր այլ կերպ ապրել:

Էլենայի համար Հայաստանն ու հայը աստիճանաբար են բացահայտվում: Նա սկսում է ճանաչել ու հասկանալ երկիրը, բայց նրա հոգին ու սիրտը առայժմ փակ էին այդ երկրի համար: Անշուք եկեղեցում մեն-մենակ մնալով ինչ-որ սրբի կիսաջնջված որմնանկարի առաջ՝ հանկարծ զգում է, որ սրբի աչքերը թափանցել են մինչև իր հոգու խորքը: Այն, ինչ լսել էր երկրի ու ժողովրդի մասին, արդեն զգում է հոգով: Ցնցումն այնքան ուժգին էր, որ էլենան կորցնում է գիտակցությունը: Թիթեռնիկային կյանքի սովոր կինը միանգամից հարստանում է հոգով, և դա անճանաչելիորեն փոխում է նրան: Ցավոք, Հայաստան աշխարհի հետ Էլենայի երկխոսությունը մի կարճ բռնկում էր ընդամենը: Հայաստանից հեռնալուց հետո առօրյա կյանքի զվարճանքներն ու թեթև արկածները կլանում են նրան, առնում շրջապատույթի մեջ, և այդ գեղեցիկ կինը մոռանում է եկեղեցու պատի՝ իր հոգու խորքը թափանցած աչքերը: Նա չի էլ հասցնում հասկանալ, որ այդ աչքերում ամբողջ ժողովրդի ոգին ու էությունն են ամփոփված:

#### *Դ. Պետրոս Մարկ. ուսուցանող*

«Նավը լեռան վրա» վեպի գլխավոր հերոսը՝ Արա Հերյանը, Հայաստան էր եկել սրտի և արյան կանչով՝ իմանալով, որ հայրենիքը օրհասական պայքար է մղում լինելու և ապրելու համար: Գլխավոր հերոսը նախ պետք է ճանաչեր իր երկիրն ու ժողովրդին, հայտնաբերեր Հայաստանը, որպեսզի նվիրվեր նրան: Ճանաչմանը օգնում են վեպի տարբեր հերոսներ՝ յուրաքանչյուրն իր չափով ու իր ձևով: Այդ հերոսներից մեկն էլ Պետրոս Մարկն էր:

Վեպում չի կարևորվում, թե Մարկը ինչով էր զբաղվում մինչև Հայաստան գալը: Կարևորվում է այլ հանգամանք. նա Հնդկաստանից էր և իր մեջ կրում էր Արևելքի փիլիսոփայությունը, Արևելքի մարդու աշխարհընկալումը՝ բոլորովին տարբեր եվրոպացուց:

Պետրոս Մարկի հետ զրույցից հետո են բացվում նավապետի հոգու աչքերը: Պետրոսը իր մտածումներն է վստահում Հերյանին, և ընթերցողը հասկանում է, որ նրա միջոցով հեղինակը կիսում է մեզ հետ իր մտքերը, զգացումներն ու զգացմունքները, վերաբերմունքը ժողովրդի նկատմամբ, ժողովրդին ընկալելու իր կերպը:

Հնդկահայը ցավով տեսնում է, որ ժողովուրդը վատնել է ավանդույթները, մոռացել ավանդությունները, որոնք հոգու և էության արտահայտությունն են: Բայց երբ համեմատում է մեր երկիրը Արևմուտքի երկրների հետ, տեսնում է, որ մեր երկիրը պատկանում է «սրբազան աշխարհագրության», ուր ամեն ինչ պատճառաբանված է՝ ամեն խոսք, շարժում, գործողություն, քանի որ երկիրն ու մարդը հոգեկան միասնություն են կազմել: Ընթերցողը Պետրոս Մարկի միջոցով լսում է հեղինակի կարևորագույն միտքը՝ երբ մեր ժողովուրդը իր երկրի հետ միասնություն էր կազմում, նրա հոգին լուսավորվում էր երկրից բխող լույսով, նա



արարում էր տաճարներ, որոնք ցույց են տալիս երկրի ու անձի համադրությունը, առանց որի չի կարող իսկական կյանք լինել:

Շրջելով Հայաստանում՝ հնդկահայը տեսել էր վիրավոր տաճարներում ամփոփված Լույսը՝ մեր ժողովրդի՝ երկար դարերի տքնանքի և պայքարի արդյունքը: Մարկը Սևանի հինավուրց վանքում կրկին տեսնում է Լույսը, իսկ երբ եկեղեցում հանդիպում է նաև Հերյանին, հասկանում է, որ իր առաջ կանգնած է այն նվիրյալը, որին ինքը փնտրում էր: Նա աշխատում է Հերյանին բացատրել որպեսզի Լույսը լուսավորի ժողովրդին, անհրաժեշտ են նվիրյալներ, որոնք կկարողանան նորից մատնանշել ժողովրդի կորցրած ճանապարհը, այլապես ժողովուրդը դատապարտված է: Պետրոս Մարկի առաքելությունը Հերյան-տեսակին գտնելը և Լույսի խորհուրդը նրան հասցնելն է, իսկ Հերյանի առաքելությունը ժողովրդի առջևից գնալն է՝ Լույսը ջահ դարձրած:

Ինչպես տեսնում ենք, այս հնդկահայը փիլիսոփա է և ուսուցանող, ոչ մարտիկ, այդ պատճառով էլ չի կարող իր ուսերին վերցնել այն առաքելությունը, որի անհրաժեշտությունը գիտակցում է, բայց նաև գիտի, որ չի կարող իրականացնել: Նա այն միջոցն է, որով կարևորագույն միտքը Հերյան-տեսակին պետք է հասներ:

*Ե. Ավետիս Չարչարյան. բանաստեղծը և խորհրդահայ իրականությունը*

«Բանկոռպը և մամուփի ոսկորները» վեպում Չարչարյանի կերպարի համար նախատիպ է ծառայել Եղիշե Չարենցը: Հերոսի և նրա նախատիպի և՛ արտաքին, և՛ կենսագրական նմանությունները չափազանց շատ են: Գրելով բուլճակների և նրանց գաղափարախոսության մասին՝ Կ. Չարյանը չէր կարող չկերտել բուլճակ «ինտելիգենտի» կերպար, որին շատ հարմար էր Չարենցը: Հենց որ Չարենցի կենսագրությանը ծանոթ ընթերցողը գլխի է ընկնում (իսկ դա շատ շուտ է տեղի ունենում), թե խոսքն ում մասին է, ցավ է ապրում սիրելի բանաստեղծի նման նկարագիրը կարդալիս: Եթե չկենտրոնանանք բանաստեղծի արտաքինի նկարագրության վրա և չշտապենք եզրակացություններ անել Չարենցի նկատմամբ Չարյանի վերաբերմունքի մասին, կտեսնենք գրողի զգացած ու հասկացած իրական Չարենցին և նրա իրական վերաբերմունքը բանաստեղծի նկատմամբ. «Չնայած արտաքին իր ձևերի բոլոր այլանդակություններին, իր անձի արտառոց եւ ծաղրանկարական կողմերին, նրա մէջ մի ինչ որ ամբողջական գիծ կար, որ հրապուրիչ էր եւ նոյնիսկ մեծղի: Հայ շինականի ոչխարի հոտը եւ հայ երկրի հակասական բնոյթը: Լերան կատարին անցնող դղրդալից մրրիկը եւ լերան ստորոտի մօտ բուսնող թթենու շուքի տակ պառկած բանաստեղծական զգայնութիւնը: Կոպիտ հողը եւ յանկարծակի բուսած մանիշակների կարպետը»<sup>12</sup>: Չարենցի կերպարի առումով արտաքինը չէ կարևորը: Չարենցի մեջ Չարյանը տեսնում է հայ անհատին և այն ամբողջականությունը, որը օրինակելի էր համարում. «Վերջ ի վերջոյ իրական հայը: Նա, որ իր մարմնի ամէն մի մասով, իր հոգու բոլոր թելերով կապուած է երկրին եւ որի համար արտաքին աշխարհը գոյութիւն ունի այնքան, ինչքան նա կարող է համեմատութեան ենթարկել իր սեփական երկրի հետ: Նա նայում է աշխարհին հայի աչքերով: Նա իր աչքերը չի փոխում: Ու Հայաստանը է (ընդգծումը հեղինակինն է), որովհետս նա կայ»<sup>13</sup>:

<sup>12</sup> Չարեան Կ., Բանկոռպը եւ մամուփի ոսկորները, էջ 544:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 544:

Չարենցի գնահատականներից ամենագեղեցիկը, ամենազարմանալի ճիշտը: Արտաքին տգեղության տակ՝ հոգեկան չտեսնված գեղեցկություն, փոքրիկ մարմնի մեջ՝ այնքա՛ն հզորություն, որը զարմանալիորեն կարողացել է տեսնել ու առանց վախենալու գնահատել ու բարձրաձայնել Չարյանը այն ժամանակ, երբ Չարենցին հալածում ու ստորացնում էին, և երբ բանաստեղծի իրական գնահատականը դեռ ոչ ոք չէր տվել:

Չարենցին այսօրվա աչքերով տեսնելն ու գնահատելը հեշտ է, և հերոսություն դրա համար չի պահանջվում: Հերոսությունը Չարյանինն է, որ 20-րդ դարի քսանականների վերջին, երբ գրվում էր այս գիրքը, կարողացել է արհամարհել Չարենցին նսեմացնող կարծիքները և գրել իրական Չարենցի մասին, գնահատել այնպես, որ կարդալիս միայն հիացմունք ես ապրում: «Ես նախանձում եմ նրան» նախադասությունը բավական է Չարյանի իրական վերաբերմունքը Չարենցի նկատմամբ հասկանալու համար: Ուշադիր ընթերցողը կհասկանա Չարյանի ցավը. Չարչարյանի նման տաղանդները, հայտնվելով գաղափարախոսական մամլիչի մեջ, վատնում են իրեց տրված աստվածայինը:

## *2. Արա Հերյան, Բաբկեն Միրանյան, Միշա Թումանյան. անձնվիրում*

«Նավը լեռան վրա» վեպում գրողը կերտել է հայրենասերների կերպարներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր աշխարհայացքը, իր գործելակերպը, նպատակին հասնելու իր ճանապարհը: Նրանք քաղաքական գործիչներ չեն, բայց ճիշտ են հասկանում, թե ինչ է պետք հայրենիքին և ժողովրդին: Գեղեցիկ ու վերամբարձ խոսքերի փոխարեն նրանք գործում են ուժերի ներածի չափով՝ ամենամեծ խոսք դարձնելով անձնական օրինակը:

Հերյանը հասկանում է, որ հայրենիքը նախնիներից ժառանգած սեր և կարոտ է, որ հոսում է երակներով և անդարձ կապում նախնիների հողին և մինչև չգտնի իր հայրենիքը, հոգու պարապությունը ոչնչով չի կարողանա լցնել: Մտածող, ինքն իրեն պրպտող անհատականությունը, ինչպիսին Հերյանն էր, չէր կարող ապրել հոգեկան երկվությամբ: Նա հասկանում է նաև, որ սեփական անհատականության ամբողջականությունը հնարավոր է միայն հայրենիքի հետ միասնանալով: Հերյանը կարողացել էր իր հոգին պատած ամենօրյա տաղտուկի շղարշը դեն նետել և տեսնել իր կյանքի կարևոր գիծը՝ նվիրումը հայրենիքին: Միայն այդպես կկարողանա հոգեկան խաղաղություն գտնել:

Մեծ առաքելություն է ծանրացած հերյանների ուսերին՝ հետ բերել հույսը, լուսավորել և ցույց տալ ապագայի ճանապարհը: Մարդիկ վերագտնում են իրենց հավատը միայն անձնվիրում տեսնելով. հույսը միայն այդ դեպքում է արթնանում: Արա Հերյանը ուժեղ, կամային անհատականություն է: Նա կարողացավ մի կողմ դնել անձնականը, հասկանալ, որ կա միայն մեկ ճշմարտություն և մեկ գաղափարախոսություն՝ հայրենիքը, որին պետք է նվիրվել ամբողջովին՝ չակնկալելով ոչինչ: Արա Հերյանի մեջ հեղինակը տեսնում է այն անհատին, որոնցից ապագայում կազմված պիտի լինեին մեր հասարակությունը:

Բաբկեն Միրանյանը ռուսական բանակի սպա է եղել, որի կյանքի արժեքներն էին Նապոլեոն Բոնապարտը, գեղեցիկ պարելը և երաժշտությունը, բայց գալով Հայաստան՝ հասկացել էր, որ իր դարավոր երկիրը պարզապես տարածք չէ: Նա տեսել, զգացել ու հայտնաբերել էր իր երկրի էությունը՝ ոգեղենը, որով այն

տարբերվում է այլ երկրներից: Միգուցե նրա հետ երկխոսել էր Արարատյան դաշտը ու բացել իր խորքերում թաքնված ճառագումը և լուսավորել էր Միրանյանի հոգին: Նա մեկնում է կռվելու՝ այդ ոգեղենը պաշտպանելու համար: Միրանյանի կերպարով Ջարյանը ցույց է տալիս հայի էության և աշխարհում նրա առաքելության հատկանշական կողմը՝ գեղեցիկը արարելը և այդ գեղեցիկը պաշտպանելը, որն էլ մեր ժողովրդին առանձնացնում և յուրօրինակ է դարձնում:

Միշա Թումանյանը հայրենիք էր եկել հեռավոր Բեսարաբիայից: Նա ոչինչ չգիտեր հայրենիքի մասին: Հայաստանում նա տեսել էր միայն «մերկութիւն, քանդածութիւն, թշառութիւն», բայց դա չէր վախեցրել նրան: Որոշել էր անել այն, ինչ գիտեր և կարող էր: Նա Սևանում մոտորանավակ էր սարքել, կառավարության օգնությամբ զինել թնդանոթով, իսկ երբ թշնամիները չորս կողմից վրա էին տվել, նրա մոտորանավակը անցել էր հայրենիքի պաշտպանությանը:

Արա Հերյանը, Բաբկեն Միրանյանը և Միշա Թումանյանը Կոստան Ջարյանի իդեալի մարմնավորումն են՝ ուժեղ, կամային, ոգեղեն ու ոգեղենի համար անձնվիրաբար պայքարողներ: Նրանք մեծացել էին Հայաստանից դուրս, բայց Հայաստանը կրում էին իրենց արյան մեջ, ենթագիտակցության ամենախոր շերտերում: Նրանց միջոցով հեղինակը բարձրաձայնում է ճշմարտությունը. եթե դու հայ ես ծնվել, ապա երբևէ քո հայությունը դուրս է լողալու ամենաթաքուն խորքերից, տիրելու է քո մտքին ու հոգուն և առաջնորդելու է քեզ, փոխելու է ապրելուդ կերպը, որոշելու է կյանքի նկատմամբ քո դիրքորոշումը: Հենց այդ պատճառով էլ այս երեք հերոսները հայտնվում են Հայաստանում և իրենց նվիրում հայրենիքին:

## *2. Հեղինակի կերպարը*

Երկու վեպերում՝ «Անցորդը և իր ճամփան», «Բանկոպը և մամուփ ոսկորները», ընթերցողը ծանոթանում է հեղինակի կերպարին:

«Անցորդում» Կ. Ջարյանը անցորդ է, դիտորդ, ինչպես բոլորս: Բայց ի տարբերություն սովորական անցորդներիս՝ նա ոչ միայն տեսնում է ու զգում տեսածը, քննում, եզրակացնում է և ուղղորդում, այլև տեսնում է այն ծածուկը, որը բազում խորհուրդներ ունի: Նա ներկայացնում է Հայաստանի քաղաքական, տնտեսական, սոցիալական վիճակի վերլուծությունը, գնահատումն ու համադրությունը «դրսի մարդու» (թեև նա նույնքան «ներսի մարդ» է, քանի որ իր երկիրն ու ժողովրդին կրում է արյան ու գիտակցության մեջ) աչքերով և մոտեցմամբ, պատկերում է իրական մարդկանց իրական կյանքի ցավալի պատմություններ: Ընթերցողն զգում է նրա ապրած ցավը, զայրույթը, որը կարող է տեղ-տեղ երգիծանքի, նույնիսկ սարկազմի վերածվել: Տեսնում է նաև գրողի անսահման սերը և հպարտությունը երկրի ու ժողովրդի նկատմամբ: Գրողն իր մաշկի վրա է զգացել այդ խառնակ ժամանակների բոլոր տազնապները: Ջարյանի ստեղծագործություններում տեսնում ենք, որ հայությունը նրա հոգում է, նրա արյան մեջ, և նա փնտրում է իր երազանքների ամբողջական, միասնական հայությունը: Դրանում է հեղինակի ողբերգությունը: Նա փնտրում է ճանապարհներ տառապած ու տառապող հայությանը փրկելու և նրան իր երազած բարձունքում տեսնելու համար: Նրա ողբերգությունը նաև այն է, որ շատ լավ տեսնում ու զգում է այն ներուժը, որը կարող է հայությանը դուրս բերել ճգնաժամից, և մոլեգնում է՝

հասկանալով, որ տեղական առաջնորդները, միացած օտարին, հեռացնում են ժողովրդին փրկության ճանապարհից: Իբերյանին ընթերցողը հանդիպում է վեպի առաջին երկու շրջաններում: Կենսագրական նմանություններից զատ՝ նրանք նույն բարոյախոսական և փիլիսոփայական հայացքների կրողն են: Իբերյանը այն կարևոր հերոսն է, որի մեկնաբանությունները, փիլիսոփայական դատողությունները, վերաբերմունքը որևէ հարցի կամ մարդու ուղղորդում են ընթերցողին: Նա օգնում է հասկանալու, տեսնելու, զգալու, թե ինչ են հայր և Հայաստանը, նոր հասարակարգն ու այդ հասարակարգի գաղափարախոսությունը: Իբերյանի երազանքն է, որ ցեխի, թշվառության, արյան խառնուրդի քաոսից ծնվի նոր մարդը, որը պետք է լինի մարդ-իշխան, աստվածաստեղծ մարդ, այսինքն՝ ազատ կամք ունեցող, ազատ երազել և ազատ գործել կարողացող հզոր անհատ: Իբերյանը չափազանց կարևորում էր նոր մարդու ձևավորման անհրաժեշտությունը, քանի որ ժողովուրդը հասել էր փակուղի. ամեն ինչ վերածվել էր առուծախի, նյութականը տիրել էր կյանքի բոլոր ոլորտներին, իսկ հոգևորի համար տեղ չէր մնացել: Խորհելով իր ժողովրդի մասին՝ Իբերյանը կարծիք է հայտնում, որ ուժեղ է այն ժողովուրդը, որը կարողանում է ոչ միայն ցավը հաղթահարելով ապրել, այլև լսել նախախնամության ձայնը. մեծ ցավին տրվելիս հոգիները դառնում են խուլ, մտքերը՝ մեռած: Կյանքը անտանելի բեռ է դառնում, երբ միտքը կորցնում է հանդգնությունը, իսկ հայ ժողովուրդը «... նա է, որ պիտի լինի կայսր»:

Ծանոթանալով Ջարյանի նկարագրած իրականությանը նաև նրա կերտած հերոսների միջոցով՝ տեսնում ենք նրա աշխարհայացքի դրսևորումը. մեր ժողովուրդը ոգու և մտքի յուրահատուկ ամբողջություն է, որը ծնվել է երկրի և ժողովրդի միասնությունից, դարերի ընթացքում մշակույթի, կրոնի, ավանդույթների շնորհիվ ձևավորված միայն այս ժողովրդին հատուկ գաղափարաբանությունից: Եվ, ամենակարևորը, մենք, ըստ Ջարյանի, մշակութային ազգ ենք: Մեր ժողովրդի յուրաքանչյուր անդամ այդ մշակույթի և ազգային մտահայեցության կրողն է: Ջարյանը կարծում է, որ յուրաքանչյուր գաղափարախոսություն, որը չի ծնվել ժողովրդի էությունից կամ գոնե չի դարձել ժողովրդի ոգուն ու մտահայեցությանը հարազատ, և՛ ժողովրդի, և՛ անհատի համար դառնալու է ողբերգություն:

Ատենախոսության վերջում ընդհանրացվում է աշխատանքը, ներկայացվում են հետևյալ հիմնական *եզրակացությունները*.

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Կոստան Ջարյանը 20-րդ դարասկզբին՝ իր գրական մուտքի առաջին շրջանից սկսած, ուներ ձևավորված հայացք, որն էլ պիտի ծներ աշխարհայացքային այն համակարգը, որի դրսևորումը տեսնում ենք նրա վեպերում:

Նա քննում է հայի էթնիկ յուրահատկությունը՝ ներկայացնելով երկրի տարածքային-աշխարհագրական յուրօրինակությունը: Քննում է մշակութաբանական հարցեր՝ դրանցում կարևորելով բնապատմական ինքնության դրսևորումները: Ջարյանը խոսում է գաղափարաբանության մասին, որը պետք է ձևավորվի՝ հանձն առնելով ժողովրդի կերտած պատմությունը, մշակույթը, վերաբերմունքը կրոնին: Ջարյանը ցանկանում-կոչ է անում ընկալել և արտածել

ազգային գոյաբանության փիլիսոփայությունը, առանց որի հնարավոր չէ ընկալել նաև այն հիմնական գաղափարը, որը պետք է առաջնորդի ժողովրդին:

2. Իր երեք վեպերում՝ «Անցորդը և իր ճամբան», «Բանկոռպը և մամուփ ոսկորները», «Նավը լեռան վրա», Կոստան Զարյանը ներկայացնում է ժողովրդի ապագայի իր տեսլականը՝ հաստատելով, որ առանց գաղափարաբանության ժողովրդի զարգացման ընթացքը հնարավոր չէ: Քանի որ յուրաքանչյուր ժողովուրդ ներկայանում է որպես ոգու և գաղափարի յուրահատուկ ամբողջություն, ուստի գաղափարական յուրաքանչյուր միջամտություն կարող է աղավաղել այդ ամբողջականությունը: Ընդունելով, որ քաղաքակրթության առաջընթացը կասեցնել հնարավոր չէ, գրողը, այնուամենայնիվ, կարծում է, որ նոր գաղափարաբանությունը պետք է հիմնվի երկիր-ժողովուրդ-ոգի միասնության գաղափարի վրա: Կարևորելով մանավանդ ազգային ոգին՝ Զարյանը կարծում է, որ հենց մշակույթն է կոչված պահպանելու մեր ազգի յուրահատկությունը, ուրեմն և հարատևությունը:
3. «Անցորդը և իր ճամբան», «Բանկոռպը և մամուփ ոսկորները» վեպերի ժանրային առանձնահատկությունները նույնպես Զարյանի աշխարհայացքի արտահայտման դրսևորումն են: «Անցորդը և իր ճամբան» և «Բանկոռպը և մամուփ ոսկորները» վեպերը ժանրային առանձնահատկությունների առումով էականորեն տարբերվում են դասական վեպից թե՛ կառուցվածքով, թե՛ ասելիքի ձևով: Զարյանի այս վեպերում ժանրային տեսակներից մեկը թափանցում է մյուսի մեջ, մի քանի մեթոդներ համադրվում և հանդես են գալիս միասին. կարելի է ասել, որ գործ ունենք վեպի համադրական տեսակի հետ:
4. «Նավը լեռան վրա» վեպի բոստոնյան և երևանյան հրատարակությունների համեմատությունից պարզվում է, որ խմբագրման ընթացքում խախտվել է ստեղծագործության ամբողջականությունը. առաջացել են կառուցվածքային, իմաստային և ոճական փոփոխություններ: Շատ բառ-պատկերներ իմաստազրկվել են, լեզվական տարրերը կորցրել են գեղագիտական նշանակությունը, իսկ ամենակարևորը՝ փոխվել է վեպի գաղափարական բովանդակությունը: Խախտվել է ասելիքը ընթերցողին հասցնելու հեղինակի ցանկությունը և իրավունքը, քանի որ հեղինակ-ընթերցող կապի փոխարեն ստացվել է հեղինակ-խմբագիր-ընթերցող միջնորդավորված կապը, և ընթերցողը չի կարողանում հեղինակին ճիշտ գնահատել:
5. Գրողը կարևորում է գրական ստեղծագործության լեզուն, քանի որ այն մշակույթի անբաժան մասն է: Լեզուն ավանդույթ է, որը, պահպանելով իր էությունը, պետք է անընդհատ նորոգվի և նորանոր ձևերով հանդես գա: Բառը ավանդություն է, որը ձևավորվել է դարերի ընթացքում բազմաթիվ սերունդների կողմից, երբ նրանց փորձը, մտածելակերպը, ոգին ամփոփվել են բառի մեջ: Բառի մեջ կուտակված ներքին իմաստը չի փոխվում, բայց ժամանակի ընթացքում կարելի է և պետք է նորանոր ձևեր հաղորդել նրան:
6. Զարյանի լեզուն և ոճը քննելիս տեսնում ենք սիմվոլիզմի ազդեցությունը. նրա ստեղծագործություններում բառը ստանում է յուրօրինակ խորհուրդ, որն ընդլայնում ու խորացնում է նրա իմաստը: Համակցվելով ու համադրվելով՝ բառերն ապրում են իրենց վերագրված հատուկ կյանքով և ստեղծում են բացարձակապես այլ

պատկերներ ու արտահայտում բացարձակապես այլ իմաստ: Այսպես ստեղծվում են բառ-խորհրդանիշեր ու բառ-պատկերներ, որոնք անհրաժեշտ են գրողին՝ իր միտքն ու զգացմունքները լիարժեք արտահայտելու համար: Գրողը կարողանում է թափանցել իրերի և երևույթների խորքը և հայտնաբերել կարևորը, երբեմն էլ սովորական ընթերցողի համար անտեսանելին: Այդ անտեսանելին մեր առջև բացվում է հաճախ խորհրդանիշերի միջոցով:

7. Կոստան Զարյանը՝ որպես հոգեբան, կարողանում է թափանցել մարդկային էության խորքերը և մեկ-երկու վրձնահարվածով կերտել կերպարներ, որոնք ընթերցողի համար ճանաչելի են դարձնում և՛ ժամանակաշրջանը, և՛ այն հասարակությունը, որի անդամն են:

Ըստ Զարյանի՝ մեր ժողովուրդը ոգու և յուրահատուկ արժեհամակարգի ամբողջություն է, որը ծնվել է երկրի և ժողովրդի միասնությունից, դարերի ընթացքում մշակույթի, կրոնի, ավանդույթների շնորհիվ ձևավորված գաղափարաբանությունից: Մենք, ըստ Զարյանի, մշակութային ազգ ենք: Մեր ժողովրդի յուրաքանչյուր անդամ այդ մշակույթի և ազգային գաղափարաբանության կրողն է: Յուրաքանչյուր գաղափարախոսություն, որը չի ծնվել ժողովրդի էությունից կամ գոնե չի դարձել ժողովրդի ոգուն ու մտահայեցությանը հարազատ, և՛ ժողովրդի, և՛ անհատի համար դառնալու է ողբերգություն:

#### **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ**

1. Հայն ու հայկականը Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպում, «Գարուն», N.5-6, Երևան, 2012, էջ 48-60:
2. Հայաստանը՝ որպես խորհրդանիշ Կոստան Զարյանի արձակում, Երիտասարդ գրականագետների հանրապետական գիտաժողովի նյութեր, Երևան, «Ապագա» ՍՊԸ հրատարակչություն, 2013, էջ, 149-158:
3. Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի երևանյան հրատարակությունը, Գրականագիտական հանդես, Երևան, «Անտարես» հրատարակչատուն, 2015, ԺԶ, էջ 119-130:
4. Արարատյան մարդ. երազա՞նք, Գիտական աշխատություններ XIX (Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն), Գյումրի, 2016, էջ 246-250:
5. Պետրոս Մարկի կերպարը Կոստան Զարյանի «Նավը լեռան վրայ» վեպում, Հայագիտական հանդես, Խ. Աբովյանի անվ. համալսարան, 2017, N 2 (36), էջ 129-136:
6. Կոստան Զարյանի «Անցորդը եւ իր ճամբան» վեպի ժանրը, Գրականագիտական հանդես ԺԷ 2016, Երևան, «Արմավ» հրատարակչություն, 2017, էջ 55-60:
7. Զարենցի կերպարը Կոստան Զարյանի «Բանկոօպը և մամուլի ոսկորները» վեպում, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2017, N 3 (651), էջ 212-216:

## ОГАНЕСЯН АНАИТ ГУРГЕНОВНА

### ХУДОЖЕСТВЕННАЯ ПРОЗА КОСТАНА ЗАРЯНА ( романы «Странник и его путь», «Рабкооп и кости мамонта», «Корабль на горе»)

**Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.02 – Армянская литература новейшего периода.**

**Защита диссертации состоится 30 марта 2018 года в 13:30 часов на заседании специализированного совета 003 по специальности «Литературоведение» при Институте литературы имени М. Абегамяна АН РА по адресу: ул. Григора Лусаворича, 15, г. Ереван.**

Диссертационная работа посвящена исследованию значительной части художественной прозы армянского писателя 20-го века Костана Заряна – романов “Странник и его путь” (Ереван, 2010), “Рабкооп и кости мамонта” (Антилиас, 1987)<sup>14</sup>, “Корабль на горе” (Бостон, 1943 и Ереван, 1963). Мировоззрение Заряна как целостная система отражено в этих трех романах, по этой причине мы сочли целесообразным избрать отдельным объектом исследования именно эти три романа.

В диссертационной работе предпринята попытка рассмотреть мировоззрение писателя, которое было сформировано в Европе под влиянием литературных и философских течений времени. Со временем образуется интересная концепция, которая и должна была породить ту своеобразную мировоззренческую систему, выражение которой мы видим в романах Заряна.

Диссертант обращается к жанровым особенностям романов Заряна, исследует способы создания образов, эстетическое мировосприятие писателя. Особое значение придано отношению писателя к родине, к народу и его культуре. Автор диссертации обращается к темам, которые затрагивает Зарян в указанных романах: отношения личности и общества, государства и народа, идеологии правящей партии и искусства, армянского духа и армянина будущего.

Обращение к художественной прозе Заряна актуально, поскольку

1. нет полноценного и систематизированного исследования его произведений,
2. затронутые в его произведениях вопросы столь же важны и злободневны, как и во времена создания этих романов.

---

<sup>14</sup> До выхода в свет отдельными изданиями были опубликованы в журнале «Айреник» в 1927 и в 1931-1934 годах соответственно.

В работе подробно рассматриваются мировоззрение, эстетический идеал Заряна, жанровое своеобразие произведений, особенности создания образов, язык и стиль исследуемых романов, их актуальность. Выполнен также сравнительный анализ двух изданий романа «Корабль на горе» с целью выявить авторский вариант, а также показать, как судьба народа оказала непосредственное влияние как на судьбу самого писателя, так и на судьбу его произведений.

В диссертационной работе впервые обстоятельно исследуются и комментируются тематические и лексико-стилистические особенности, идейное содержание, искусство создания образов в художественной прозе Костана Заряна, композиция и жанровые особенности романов.

При исследовании рассматриваемых в диссертации проблем применены филологический, сравнительный методы, принципы сопоставительного и системного анализа художественных произведений.

Диссертационная работа состоит из введения, трех глав, заключений и списка литературы.

#### *Глава первая. Философско-художественные взгляды Заряна.*

В данной главе представляется состояние армянской литературы в начале 20-го века, раскрывается философско-эстетическое мировосприятие писателя, его точка зрения на армянскую идеологию. Согласно его мнению, идеология формируется, вбирая в себя созданную народом историю, культуру, отношение к религии. В культуре писатель особую важность придает литературе, поскольку она, будучи искусством слова, доступна многим. Зарян считает, что истинная литература не должна создаваться идеологией какой-либо партии.

Оценивая культуру и литературу нашего народа, писатель порой впадает в преувеличение. Такие умозаключения Заряна – результат его великой любви к культуре своего народа, ее высокой оценки, и одновременно это результат его обеспокоенности о том, что под влиянием чуждой идеологии вековая культура может исказиться, измениться, преобразовываться. Та же обеспокоенность заставляет Заряна задумываться о будущем армянского писателя и созданной им литературы. Зарян не может принять зависимость от литературных методов, которые также стесняют писателя.

Зарян изображает в своих романах хаос, возникший в отношениях стран и народов, и строит на этом изображении свой посыл – увидеть и представить читателю сущность и дух армянина, определить поддерживающую его силу, показать, как сумел армянин преодолеть подобные испытания, пройти сквозь бури времен и дойти до наших дней.

По мнению писателя, национальный менталитет образуется из тех вечных ценностей, которые как светоч несет в себе личность. Эти ценности формируются на протяжении веков из чувств и мыслей племени, из отношения к стране и человеку. Человек несет в себе эти ценности, оставаясь частицей своего народа. Зарян в своих романах говорит о становлении и выражении идеологии в духовно-культурологической сфере нации.

Вдохновленный произведением Фридриха Ницше «Так говорил Заратустра», Костан Зарян создал воспринятый им идеал человека-героя, желая или мечтая о



его рождении. Писатель воспринимает Иисуса как великого борца и созидателя, исполина, титана, который вступил в самый великий и тяжелый поединок, победил самого себя, духовное в нем смогло одержать победу над материальным. Иисус сумел испытать внутреннее перерождение. Однако создавая своего человека-героя, Зарян не ограничивается только образом Иисуса. Ара – умирающий и воскресающий бог, также являлся великим преображающимся. Он несет в себе солнечную сущность языческих богов. К. Зарян полагает, что в основе понятия «сверхчеловек» лежит гармоничное соединение Христа и Ара. Представляя свое восприятие сверхчеловека и именуя его Араратским человеком, доказывая, что наша страна и наш народ в состоянии породить сверхчеловека, Костан Зарян выражает уверенность в том, что армянин несет в себе то божественное, которое должно породить Араратского человека.

Костан Зарян в своих трех романах, представляющих его художественную прозу – “Странник и его путь”, “Рабкооп и кости мамонта”, “Корабль на горе” – не только описывает Армению двадцатых годов 20-го века, но и анализирует большевистскую идеологию, ставя цель понять, насколько эта идеология соответствует сути нашего народа и может ли она обеспечить тот прогресс, которого достоин наш народ. Писатель представляет свое видение будущего нашего народа, утверждая, что без идеологии невозможен процесс развития народа. Принимая, что невозможно остановить прогресс цивилизации, писатель тем не менее считает, что новая идеология должна основываться на идее единства: страна-народ-дух. Особо выделяя национальный дух, Зарян полагает, что именно культура призвана оберегать своеобразие нашей нации, а значит и ее долговечность.

*Глава вторая. Видение национальной судьбы в романах Заряна.*

В романе «Корабль на горе», изданном в 1963 году в Ереване, вследствие редактирования возникли искажающие его идейную, композиционную, смысловую, стилистическую и изобразительную систему изменения, в результате чего читателю было преподнесено произведение, которое не имеет ничего общего с замыслом и целями автора. Сравнение двух изданий показывает также, что в процессе редактирования «Корабля...» была нарушена целостность произведения. Целью сравнения двух изданий было также показать, что судьба нации оказала свое непосредственное влияние и на судьбу писателя, и на судьбу его произведений.

В этой главе также исследуется идейное содержание романа “Странник и его путь”. Основная тема романа – армянин и армянство. Как в оставшейся в прошлом Армении, так и в новостроящейся Армении автор ищет армянство, вернее, представляемую им своеобразную, духовную, культурную целостность. Зарян сознавал, что воображаемая им культурная Армения всего лишь прекрасная мечта, но чрезвычайно сильным было его желание увидеть эту мечту осуществленной.

*Глава третья. Искусство слова в прозе К.Заряна.*

В этой главе рассматриваются жанровые особенности художественной прозы Заряна, в частности романа “Странник и его путь”. Исследуя построение романа, обобщая его жанровые особенности, можно сказать, что мы имеем дело с синтетическим типом романа.

Анализируя роман “Рабкооп и кости мамонта”, видим, что здесь, так же, как в романе «Странник...», отсутствует присущий традиционному роману способ повествования. В этом романе одновременно проявляются черты, присущие путевому роману, дневниковой прозе или мемуарам. В романе нет главного героя в традиционном понимании, в каждой истории есть свои главные и второстепенные герои. Истории об отдельных героях сплетаются и становятся главным материалом писателя, хотя многие герои не связаны между собой действием, не знакомы друг с другом.

Одной из интересных особенностей романа “Рабкооп и кости мамонта” является то, что части книги К. Зарян назвал кругами.

Таким образом, романы “Странник и его путь” и “Рабкооп и кости мамонта” с точки зрения жанровых особенностей существенно отличаются от классического романа как композицией, так и методом изложения.

Как отдельная проблема в работе выделяется принцип художественной изобразительности зарядовских романов. Диссертант рассматривает одну из особенностей, присущих стилю Заряна - значение символов в изобразительной системе романов. Большое внимание уделено также особенностям создания образов.

В заключениях обобщается проделанная работа, представляются выводы.

**Anahit G. Hovhannisyan**  
**Kostan Zarian's Prose Fiction**  
**(The novels "The Traveler and His Road", "Bancoop and the Bones of the Mammoth", "The Ship on the Mountain")**

**The dissertation for the scientific degree of candidate of philological Sciences,**  
**speciality of 10.01.02 "Armenian Literature of Modern Period "**

**The defense will be held on the 30<sup>th</sup> of March 2018 at 13:30 o'clock at the meeting of the Specialized Council of Literary Studies 003, at the Institute of Literature after M. Abeghyan, NAS RA.**  
**Address: Grigor Lusavorich 15, Yerevan**

The paper is devoted to the study of the prose works of the 20<sup>th</sup> century Armenian writer Kostan Zarian, particularly of his novels: "The Traveler and His Road" (Yerevan, 2010), "Bancoop and the Bones of the Mammoth" (Antalya, 1987)<sup>15</sup>, and "The Ship on the Mountain" (Boston, 1943 and Yerevan, 1963). The choice of these three novels as a separate object of study is conditioned by the fact that Zarian's worldview as a complete system is expressed in these novels.

The thesis attempts to interpret the writer's worldview which was formed in Europe, under the influences of different literal and philosophical directions of the time. But in the course of time an interesting aspect is formed which would create the unique outlook system that can be observed in Zarian's novels.

The dissertation touches upon the genre peculiarities of Zarian's novels, the imagery art and the aesthetic worldview of the writer. Great importance is attributed to the writer's attitude towards his motherland, its people and culture. A reference is made to the themes found in the mentioned novels by Zarian: the relations between the individual and the society, the state and the people, the art and the ideology of the governing party, as well as the questions about the Armenian spirit and the Armenian man of future.

The study of Zarian's literary prose is topical as:

---

<sup>15</sup> Before being published in separate books, they were published in "Hayrenik" magazine, respectively in 1927 and 1931-1934

1. there is no comprehensive and systematic study of his works,
2. his works touch upon issues that are as important and urgent today as they were at the moment of their creation.

The paper thoroughly examines Zarian's worldview and aesthetic ideal, the genre features of his works, the imagery peculiarities, as well as the language and the style of the novels under study and the topic of the works. A comparative examination of the two publications of the novel "The Ship on the Mountain" has been done with the purpose to find out the authorial version as well as to show that the fate of the nation directly influenced the fate of both the writer and his creations.

The thematic and linguostylistic peculiarities of Kostan Zarian's literary prose, the ideological content, the art of imagery, the structure and the genre features of the novels have been thoroughly studied for the first time in the present paper.

To interpret the problems set in the paper philological and comparative methods, as well as the principles of contrastive and systematic analysis of literary works have been applied.

The paper consists of Introduction, three chapters, Conclusions and Bibliography.

#### *Chapter I: Zarian's Philosophical and Artistic Views*

The literal situation in Armenia at the beginning of the 20<sup>th</sup> century, the writer's aesthetic and artistic views as well as his viewpoint about the Armenian ideology are presented in this chapter. According to him an ideology is formed comprehending the history of the nation, its culture and attitude towards the religion. Within culture the literature is especially highlighted by the author, as the latter is accessible to a large amount of people being the art of speech. Zarian believes that true literature should not be created with the ideology of a political party.

Appreciating the culture and the literature of our nation, the writer sometimes tends to exaggerate. Zarian's such conclusions are the result of his great love and appreciation of his people's culture and at the same time the anxiety, that the ancient culture could be distorted, changed and transformed under the influence of foreign ideology. The same anxiety makes Zarian think about the future of the Armenian writer and his literature: Zarian does not accept to remain stuck to literary techniques which also oppress the writer.

In his novels Zarian presents the chaos created in the relationship between countries and people, and on that image he composes his message which is to see and to show the reader the spirit and the nature of the Armenians, to find out which is the force that supports the Armenians, how the Armenians have managed to overcome such trials, passed through the storms and the ages to the present day. According to the writer the national mentality is created with the enduring values that an individual keeps

in himself as a lamp. Those values are formed over the centuries from the experiences of the tribe, anxieties and the attitudes towards the country and the man. The man carries these values in himself remaining a part of his tribe. In his novels Zarian speaks about the formation and the manifestation of the nation's spiritual and cultural ideology. Inspired by Friedrich Nietzsche's "Thus Spoke Zarathustra" Kostan Zarian creates the ideal Overman according to his perception, desiring or dreaming about his birth. The writer accepts Jesus as a great fighter and creator, a titan who led the greatest and the most difficult fight: he won over himself, the spiritual part of his nature was able to win over that of material. Jesus was able to go through an inner transformation. But in creating his Overman Zarian is not limited only to Christ's image. Pagan god Ara who died and was then risen from the dead, was also a great hero of transformation. He carries in himself the solar nature of pagan gods. K. Zarian thinks that the harmonic integrity of Christ and Ara underlies the concept of Overman. Presenting his perception of an overman and calling him "Ararat man" he proves that our country and our nation are able to give birth to Overman. He is convinced that the Armenian man carries in himself the divine that should give birth to Ararat man.

In his three novels: "The Traveler and His Road", "Bancoop and the Bones of the Mammoth", and "The Ship on the Mountain" Kostan Zarian not only describes Armenia in the early 20th century (1920s), but also analyses the Bolshevik ideology with the aim to understand to what extent that ideology corresponds to the nature of our nation, and if it can provide the deserved progress for our people. The writer presents his vision of the future of our nation, stating that the development of the people is impossible without an ideology. Admitting that the progress of civilization cannot be stopped, the writer, however, believes, that the new ideology must be based on the idea of country-people-spirit integrity. Attaching great importance to the national spirit, Zarian thinks that it is the culture that will determine the uniqueness of our nation and thus its eternity.

#### *Chapter II. Contemplation of the National Fate in Zarian's Novels*

The editing of the novel "The Ship on the Mountain" published in Yerevan in 1963, caused some changes that distorted the ideological, structural, semantic, stylistic and imagery system. As a result the reader was presented with a work which had nothing to do with the idea and the purpose of the author. The comparison of the two editions also shows that in the process of editing the coherency of the novel has been violated. The purpose of the two editions also is to show that the national fate directly influenced the fate of both the writer and his creations.

In this chapter the ideological content of the novel "The Traveler and His Road" is examined. The main subjects of the novel are the Armenian and Armenianness. Both in the Armenia that remained in the past and in the new Armenia that is still being built,

the author seeks for the Armenianness, that is the spiritual, specific, cultural integrity of his vision. Zarian realized that the cultural Armenia of his vision was only a beautiful dream, but his desire to see his dream come true was too great.

### *Chapter III. The Folklore of Zarian's Prose*

This chapter presents the survey of the genre features of Zarian's prose fiction, particularly the novel "The Traveler and His Road". Studying the structure and the genre peculiarities of the novel, we can state that we deal with the combined type of a novel.

The study of the novel "Bancoop and the Bones of the Mammoth" shows that like "The Traveler" it lacks the narration style typical to the traditional novel. Here we can observe genre features of travel and diary novels and of memoirs. The novel has no protagonist in the traditional sense: every story has a main and secondary characters. The stories about different characters interweave and become the main message of the writer, although the actions of many characters are not connected as they don't know each other.

One of the most interesting characteristic features of the novel "Bancoop and the Bones of the Mammoth" is that K. Zarian named the parts of the book periods.

Thus, in terms of genre peculiarities the novels "The Traveler and His Road" and "Bancoop and the Bones of the Mammoth" greatly differ from traditional novels both with the structure and the form.

The paper also touches upon the question of imagery of Zarian's works. One of the characteristic features of Zarian's style - the meaning of symbols in the imagery system of the novels- has been discussed. The peculiarities of creating characters have been emphasized.

The conclusions and the summary of the work are presented at the end of the paper.